Աղբիւրի

Յանձնար

Տարազ

ԳԵՂԱՐՒԵՍՄԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻՉԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՆԹԱԹԵՐԹ

Աղբիւրի տարեկան բաժանորդագինն է 3—28 կ. իսկ Տարազինը 6 ռուբլի. առանձին №-ը 25 կ. հայցէն. Тифлисъ. редакція иллюстр. журн. Агбюръ կամ Таразъ. իսկ արտասահմանից՝ Tiflis-Caucase, Rédaction des jour. illustrés Agbur կամ Taraz.

№ 41 կիրակի 27 Հոկտեմբերի — երկրորդ տարի — 1891

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԷՐ ԳԷՈՐԳ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԷՆԵԱՆ,

ԹԷՍԱԼՈՆԻԿԷԻ, ԱՌԱՔԵԼՈՅ ՀԱՇՏԱՐԱՆԻ

Լոյս ընծայելով այս անգամ՝ Նորին Սրբազնութիւն Տէր Գէորգ Եպիսկոպոսի կենդանագիր պատկերը, յաջորդ անգամ կը հրատարակենք նրա մանրամասն կենսագրութիւնը եւ մեր ստացած տպաւորութիւնները, երբ մեր ուղեւորութեան միջոցին առիթ ունեցանք տեսակցել իր հետ եւ տեսնել իր հանրօգուտ ձեռնարկները:

Սա մի հոմիւ, որ Պողոս Առաքեալի Տիմոթէոսին գրածի նման՝ հեզ. ցած, պարկեշտ, ուսուցիչ. իրրեւ տանն իսկ բարւոք վերակացու. ունի վկայութիւն բարի եւ յարտաքնոցն:

Իր գործունէութեամբ Գերապատիւ Տէր Գէորգ Եպիսկոպոսը առաջին տեղն է գրաւելու անշուշտ այն անձերի մէջ, որոնք աշխարհական բարձրագոյն ճեմարաններում իրանց ուսումն աւարտելով, մնան հոգեւոր կոչման մէջ վերջին երեսուն տարուայ ընթացքում:

Տ. Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեան

„ԽՈՉՆԴՈՏ“

ԱԼԻՖՈՆՍ ԴՈԴԻ

L' Obstacle

Կատակերգութիւն չորս արարածով

ԱՐԳԱՐԻԱԾ Բ.

Մոնպէլիէի մօտ՝ Կոլոմբիէը կալուածքում գ'Ալէնի տանը։ Առաջին յարկում ռոմանդանման գիւղական դահլիճն, խորքում մի բարձր, դէպի այգին տանող լայն սանդուղքի դէմ բացուող դուռը։ Պայծառ գոյներով պատատ. Լուդովիկ ԺԴ-դի ժամանակաւոր կարասիք, ձախ կողմը մի դուռը. լուսամուտներ աջ և ձախ կողմերում, դաշնամուր և մի գրադարան։

ՏԵՍԻԼ Ա.

Դիդիէ, Հօրնիս.

Դիդիէ. (Բանալով մի պատուհան և շրխկացնում է դրսի կափարիչները persienne). Ահա մեր բնակարանը, իսկ և իսկ մեր տունը... ջահիլների օթևանը, ինչպէս մայրիկս է ասում։ Դիմում է դէպի միւս պատուհանը)։

Հօրն. Ի՞նչիդ է պէտք բոլորը բանալ։

Դիդ. (Բանալով պատուհանը և կողմնակները). Պէտք է, պէտք. ուզում եմ քեզ ցոյց տալ, դու պէտք է տեսնես... և հէնց սրա համար քիչ Նիցցայից այստեղ բերի, երբ կը յիշես մեզ, քո երեխաներիդ, այն ժամանակ պէտք է գիտենաս և մեր բախտաւորութեան չափը, դրութիւնը։ (Լուսամուտի առաջ կանգնած տիանջ է դնում). Ը՜հ՜ը, մի կտաւ նեղս եկաւ, մայրիկս նոր բաներ կը պատմի։

Հօրն. Դարձեալ հիւանդ է՞ Լստէլ զարմուհին։

Դիդ. Այո՛... Այն դերդաստանի հետ չեմ կարողանում բան աջողեցնել. հէնց ուզում եմ ամուսնական դարը կապել և ահա, անպատճառ, մէկն ու մէկը հիւանդանում է։ Առաջ խորհրդականի կինն էր, հիմա էլ Լստէլ զարմուհին... Մի բան միայն ինձ աւելի ձանձրացնում է, այն է որ Մադելէնը մի բոպէ անգամ չէ հեռանում նրանից... Այն օրից ի՛ վեր, երբ նրանք այնտեղից գնացին, երեք օր է ինչ նրան չեմ տեսել։ Ինչ և է, մխիթարւում եմ նրանով, որ սեվիլեան օգնական սարք ու կարգով եմ դրաղւած։ Տես նրա համար Պարիզից բերել աւած գեղեցիկ դաշնամուրը, բոլորովին նոր է... գրքասեղանս էլ ուզիլ դիմացը։ ...Ո՜հ. ինչպէս լաւ կը լինի, պատապելուս միջոցին նա էլ կը նստէ...

Հօրն. Երևակայում եմ թէ ինչպէ՞ս պէտք է պատասխանես։

Դիդ. Չ՞գաւ, էլի՞ ծաղրեցիր։ Յամենայն դէպս, գրքերս էլ շատ ունենք. (երկու գրադարան ցոյց տալով)։ Իմս այստեղ կը լինի դրւած, իսկ նրանը այնտեղ։ Ա՛յ, նրա գրքերը բոլորն էլ բնաբովի և լաւ կազմած են, որ չեն թոյլ տալ կարդալ, այժմ ինձ եմ վերապահում այդ հեղինակութիւններն նրան ծանօթացնելու, տես որքան շատ են. հասկանալի է այս, որովհետև ոչ մէկը չէ կարդացել։ Կը տեսնես թէ ինչպիսի հաճելի ժամանակ կանցկացնենք, որքան ուրախալի է ինձ համար զարգացնել ջահիլ արարածին ծանօթացնելով նրան վեհ ու վսեմաւոր գործերս... Ինձ համար նա և կինս է և երեխաս։ Օրհնում եմ մինչև անգամ այն մարդոցը, որ նրան ամեն բան սովորեցնելը ինձ են թողել։ Ես նրա համար կը լինեմ մի վոքր այն, ինչ որ դու ես եղել ինձ համար, մի հոգատար և բարի վարժապետ։

Հօրն. (Ծաղրում է՝ կը—զգացւած եղածը սքողելու). Ինչպէս տեսնում եմ դու նրան լատիներէն էլ կը սովորեցնես վերջ ի վերջոյ։

Դիդ. Իրը թէ դուն չէիր որ ինձ լատիներէնը սովորեցնել ուզը, յիշում ես Պրովանսում վարդ-դափնիներով հովանաւորւած այն խորշը, որտեղ մի վեհափառ մօտ նստած՝ Վերգիլիոսի «Մշակականքն» էինք կարդում... այն միջոցին բանաստեղծի ոսկեվայլ մեղուները բզզալով թռչկոտում էին մեր շուրջը, կարծես թէ գրքից լինէին դուրս թռչելիս... Այն ասպնջական գեղեցիկ, ճշմարիտ էր, որ ես „հասկանում եմ“ բացականչելով վզովդ փաթաթեցի...

Հօր. Բայց դու պէտք չես ունենայ «Մշակականքի», որպէս զի աշակերտուհիդ վզովդ փաթաթի...

Դիդ. Դու ծաղրում ես... դու ծիծաղում ես միշտ երբ մարդս սիրոյ մասին է խօսում. սակայն վա՜հ է սէրը, վա՜հ, սիրելի ծերուկս։

Հօր. Այո, կարող է լինել... չգիտեմ միայն...

Դիդ. Իրաւ, դու չգիտես... սակայն դու պարզեցիր ինձ բանաստեղծութիւնը, կիրքը. դուն էիր ինձ այս ամենը հասկացնողը... Յիշում ես Արվէրի սօնատան, որ երգում էիր. ա՜խ, շատ ժամանակ է, ինչ որ այն սքանչելի սօնատան էլ չեմ լսել...

Հօր. Այո, այո, յիշում եմ...

Դիդ. Երգում էիր քեզ յատուկ եռանդով, բոցավառ հոգով, այն գիշերը ես տասն և հինգ տարեկան էի և յանկարծ քսան տարեկան դառայ։ Սէրը չգիտենալ և ուրիշին լաւ հասկացնել նրա էութիւնը... ուզիլ որ շատ տարօրինակ բան է այդ... Ճշմարիտ, շատ յուզիչ, տզրեցիկ էր այն ոտանաւորը, (արտասանելով)։

Կեանքս ունի իր գաղտնիք, հոգիս իր խորհուրդ...

Հօր. (շարունակում է ոգևորւած).

Յաւիտենական սէրը, միայն օր մի վայելել.

Վիշտը չունի սիրոփանք, ինչպէս ես այդ զգացի,

Նոյն իսկ նրա ստեղծողը՝ ինքն էլ լաւ չէ հասկացել։

(Լուում է նկատելով Մարքիզուհու մտնելը)։

Դիդ. (չընկատելով մօրը). Դէ՜հ, շարունակիր է՛.

Հօր. Ո՛չ, ո՛չ. մի այլ անգամ։

Դիդ. (շուռ գալով նկատում է մօրը՝), Ա՜հա, ահա մայրիկս էլ եկաւ։

ՏԵՍԻԼ Բ.

Նրանք, Մարքիզուհին.

Դիդ. (մօրը). Այնտեղից ես գալիս։

Մարքիզ. (անհամարձակ) Այո, (նայում է տխրաբար Հօրնիսին)։

Դիդ. Դէ՜հ, ասա, տեսնենք, ինչպէս է սիրելի Լստէլը։

Մարքիզ. (սառնութեամբ). Փոքր ինչ լաւ է։

Դիդ. Փառք Աստուծոյ... կարծում էի կը մեռնի. սա էր պակաս, որ մեր գործը մի փոքր աւելի ուշանայ։ (Ծիծաղելով), Արածս էլ սարսափելի եսականութիւն է ուզիլ։

Հօր. (ժպտելով), բայց շատ բնական է այդ։

Դիդ. (Մարքիզուհուն). Այ, ինչպէս տեսնում ես, այս բոպէիս նրան ցոյց է տալիս նրան մեր ապագայ օթևանը նկատելով մօտ վերաւոր եղածը շղոքորթում է՝։ Ի՞նչ ես նախանձում, մեր բախտաւորութիւնից դուն էլ մասը կունենաս... մտիր այստեղ երբ կամենաս։ Պէտք է ասել, որ քեզ լաւ եմ ճանաչում, շատ էլ որ արգելեմ քեզ, դարձեալ ոչ դուռը կայ և ոչ էլ պատուհան, որ չը կա-

ըղանաս գալ ապրդ մօտ։ (Հօրնիւսին). Դիտէ՞ս, ինչ ասեց սա ինձ Թուլիզի պատերազմում մասնակցելու մի ջոցիս... Մենք արշաւում էին դէպի հարաւ... մի կողմ՝ անծանօթ աշխարհ, կիզիչ արև... տենդ ու ջերմ... Մի առաւօտ վրանիցս գալու ժամանակ հրամանատարս ինձ ասում է. „սիրելի լեհօրնան, մի տիկին ուզում է ձեզ տեսնել“։ Ցեռ եմ նայում և տեսնում եմ իմ մօրս դիմացը կանգնած. եկել էր ուղղակի, բոլորովին միայնակ առանց վախենալու..

Մարքիզ. Եւ ի՞նչից պէտք է վախէր, քանի որ այնտեղ էիր դուն։

Դիդ. (համբուրելով. Ա՜խ, Թանկագին մայրիկս։

ՏԵՍԻԼ Դ.

Նրանք, մի ծառայ.

Ծառայ. Պատատուիչն (tapissier) այնտեղ է արդէն, ուզում է ձեզունը շինել։

Դիդ. Տիկնոջ սենեակումն է. շատ լաւ, այս ըստէիս կը գամ. (քանի մի քայլ է անում դէպի ձախ)։

Մարքիզ. (Տխրագին). Տիկնոջ սենեակը... խե՜ղճ արդայ։

Ծառ. (Դիդիէին). Անտառապահն էլ շատ է ցանկանում ձեզ տեսնել։

Դիդ. (դառնալով). Սօակիօրը. ասա, թող գայ։

(Ծառան դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ. Դ.

Դիդիէ, Մարքիզուհին, Հօրնիւս. յետոյ անտառապահը.

Հօր. (Դիդիէին). Երևի, քո նշանաւոր Սօակեօրն է այն։

Մարքիզ. Այն անտառանենգին (braconnier) սա պահապան է կարգել։

Դիդ. Հէնց նա է.

Հօր. Ի՞նչպէս է կատարում նա իր նոր պաշտօնը։

Դիդ. Հիանալի կերպով։

Մարքիզ. Այո, բայց արի տես թէ ժողովուրդը որ ատելիքան դժգոհ է։

Դիդ. Շատ հարկաւոր է, նրանք լաւ գիտեն տարօրինակ եղածս։

Մարքիզ. Կարելի է ասել մի քիչ էլ աւելի։

Դիդ. Մի վախի, մայրիկս, ամուսնանալուցս յետոյ տես թէ ինչպէս կը խելօքանամ։

Սօակ. (դրսից սանդուղքի վրա). Պարոն Դիդիէ, ես արդէն այստեղ եմ։

Դիդ. Դէ՜հ, ներս արի էլ, ծերուկ. ինչ կայ։

Սօակ. (յայտնուելով). Բարև ձեզ, պարոններ, տիկին և ընկերուհիներ։ Ես նախ քան շները կը տանէի, ուզեցի հաստատապէս իմանալ թէ բոլորովին վնա՞ռ էք, պարոն Մարքիզ։

Դիդ. Ի՞նչ ասել կուզէ, ի հարկ է վնռել եմ։

Հօր. Ի՞նչ. շներիդ հեռացնում ես քեզանից։

Դիդ. Այո. Մաղբէինը շատ է վախում նրանցից. նրա համար եմ անում այդ զոհաբերութիւնը և արածիս էլ շատ ուրախ եմ։

Մարքիզ. Մի փոքր էլի սպասիր։

Դիդ. (Նեղացած). Սպասել. ի՞նչ բանի համար,

Մարքիզ. (քաշուելով). Քանի որ այստեղ չէ նա։

Դիդ. Նա շուտով այստեղ կը լինի։

Հօր. Քեզ համար խիստ մի գրկումն է այդ. այն էլ դուն և շներ չունենաս։

Դիդ. Օ՜օ, շատ երկար չի քաշի. որովհետև որսի ժամանակ հետս կը տանեմ, յետոյ մենք կը դնանք նրանց տեսնելու պահապանի մօտ, Մաղբէինն էլ կամաց կամաց կը սովորի։

Սօտ. Աւելի հաւանական է, որ նրանք չեն դիմանայ առանց ձեզ, պարոն Դիդիէ, մանաւանդ Մերկիէտը... Ո՞ւչտի զգայուն է խեղճ կենդանին։ Զը գիտեմ, ինչպէս պահել նրան։ Բայց որովհետև հրամայում էք...

Դիդ. Տէր Աստուած. արա, ինչպէս քեզ հրամայում են. չէ՞ որ այժմ դուն օրինակատարն ես։ Ծանը է քեզ պահապանի պաշտօնը միթէ։

Սօտ. Ծանը չէ ամենևին... միայն թէ դուլթիւնս է փոխւում մի փոքր։

Հօր. Հասկանալի է շատ, որովհետև իր արհեստին բոլորովին հակառակ է այս նոր պաշտօնը։

Դիդ. Դուն գոհ պէտք է լինես այժմս... սեղանդ ամեն օր պատրաստ, լաւ ճաշ ես ուտում, քնում ես հանգիստ խղճով...

Սօտ. (Նայում է հաճոյքով իր բոլորովին նոր հագուստին). Ճշմարիտ է, որ ներկայ կեանքս աւելի լաւն է... բայց և այնպէս ինձ ծիծաղելի է թւում երբ տիպաւած կը լինիմ ձեռս մի յանցաւորի վրայ դնել...

Դիդ. Լռա՜, չըլեմ, չիմանամ, որ մեղմ վարուես նրանց հետ, նայիր։

Հօրն. Շատ էլ խիստ վարուել պէտք չէ։

Մարքիզ. Այնպէս ասէք, որ ոչ մի դժբախտութիւն չըպատահի։

Սօտ. Ա՜խ, տիրուհի... ուղիղ է, այո, որ անտառանենգ են, բայց ոչ չարամիտ. ուր էր թէ չարամիտ լինէին... շատ ուրախ կըլինէի. որովհետև բարկացած միջոցին մարդս շատ չէ մտածում հետևանքի մասին, ուրեմն թող ամեն մէկը իր գլխի ճարը ինքը տեսնէ։ Չէ, այ ասեմ ձեզ, պարոն մարքիզ, թէ ինչն է ինձ նեղացնում, այն որ ես լաւ գիտեմ այն խեղճ ողորմելիների ամեն սատանայութիւնները։ Իրաւացի չէ. ա՛յ, ոչ. ես զգում եմ արածիս անիրաւ եղածը։

Դիդ. Ի՞նչի, ի՞նչ։

Սօտ. Հէնց այն պատճառով, որ պահապանները... ժանդարմները շատ խորամանկ և սատանայ չըպէտք է լինեն. բաւական է արդէն, որ նրանք օրէնքով կարգուած մարդիկ են։ Այդ միևնոյնը կը լինէր, եթէ շները աւելի զարգացած հոտառութիւն ունենային քան թէ խեղճ նապաստակները... Ուրեմն, ասէք որ էլ Աստուած չըկայ, էլի...

Դիդ. Վնաս չունի. դուն կարիճ եղիր միայն։ Մի լաւ մտածիր, որպէսզի ունիս, կին ունես. տեսի՞ր ես հօ, նոր կտրած ծառի հէնց վերջաւոր տեղից նոր-նոր և ուժեղ ճիւղեր են բողբոջում, այնպէս էլ դու պէտք է լաւ լաւ որդիք ունենաս։

Սօտ. Կաշխատեմ, պարոն մարքիզ, բայց դարձեալ կասեմ, Աստուած վկայ է, որ այս արհեստը աւելի հեշտ էի կարծում... մնաք բարով, պարոններ, տիկին և ընկերուհիներ։ (դուրս է գնում).

Դիդ. Դէ՜հ, գնա, կարիճ եղիր. (Նայում է Սօակեօրին, որ սանդուղքներից իջնում է. Հօրնիւսին). Լաւ հասակ ունի, այնպէս չէ՞։

Հօրն. Իրաւ, որ ժանդարմի համազգեստ հագնող գոյն համար...

Կոմկասեան տիպեր

Դիզ. (ուրախ. Այնպէս չէ՞. Ճշմարիտ, մարդս կարող է հեշտութեամբ խաբուել։ Այժմ տեսնենք, թէ սատանաները ինչ է ուզում. այս բոլէիս կը գամ, մայրիկս. (դուրս է գնում ձախ դռնից)։

ՏԵՍԻԼ Ե.

Մարքիզուհի. եւ Հօրնիւս

Հօրն. (երկար լռութիւնից յետոյ). Դէ՛հ, ասէք, տեսնեմ, ի՞նչ կայ։

Մարքիզ. Վերջացաւ արդէն։

Հօրն. Ձեզ նայածիս պէս, խոկոյն հասկացայ... Ուրեմն լինելու բան չէ։

Մարքիզ. Ամենևին... ոնկարելի է...

Հօրն. Միշտ միևնոյն պատճառով... հօր հիւանդութեան ժառանգականութիւնը, հա՜...

Մարքիզ. Այո. նրա տեսելով՝ հայրը ուզի որուելուց առաջ արդէն հիւանդ է եղել։ Իսկ Սէնէգալում ջերմիկը...

Հօրն. Այդ միակ զէպքը աւելի հաստատ է. այն, ես սպասում էի որ այդպէս կը վերջանայ։ Ի՞նչ պատասխանեցիք։

Մարքիզ. Ի՞նչ կարող էի պատասխանել, բարեկամ, մինչդեռ միևնոյն կարծիքին էի և ես այն գաղտնիքի մասին, որ շատ ժամանակից ի վեր տարտափեցնում էր ինձ Դիզիէին վերաբերմամբ։ Նոյն իսկ այսօր էլ ոչ մի կերպ չէի ուզի, որ գաւակս կասկածէր այն բանի մասին։

Հօրն. Այդ միևնոյն է. նա լաւ է կատարել իր հարց ու փորձը այդ պարոն խորհրդականս... Ո՞րեք օր։

Մարքիզ. Նրան դուք անկեղծ մարդ չի՞ք համարում։

Հօրն. Ո՞ւ, ոչ։

Մարքիզ. Ազնիւ մարդիկ են նրանք, սակայն։

Հօրն. Էստէլի մասին չէ՞ ասածս։ Նա մի անմեղ և շատակեր չաղ կատու է... միւսը, իր խորհրդական եղբայրը...

Մարքիզ. Այդպէս ուրեմն, դուք կարծում էք, որ...

Հօրն. Ես կարծում եմ, որ պարոն Կասիլլանը, իր կնոջ մահից յետոյ, ուրիշ բան չէ մտածել, եթէ ոչ արդելել Դիզիէի ամուսնութիւնը և իրեն վերապահել թէ ջահիլ աղջիկան և թէ նրա թանկագին օժիտը։

Մարքիզ. Հօրնիւս, Հօրնիւս։

Հօրն. Այո, ասածս նրա Ճակատի վրայ կարելի էր պարզապէս կարդալ... միայն Մադրիէնն է ինձ զարմացնում. մի՞թէ բան չէ ասում, չի՞ բողոքում։

Մարքիզ. Ամենևին...

Հօրն. Էլ ես բան չեմ հասկանում այստեղ... գիտի՞ նա գլուխ չդգալու պատճառը։

Մարքիզ. Ի հարկէ, գիտէ։ Հէնց այն բանով են տարտափեցրել, որ կարող է նա տարագայում ինձ նման անբախտանալ, որ որդիքը կը ժառանգեն հօր խելագարութիւնը... կրկնում եմ դարձեալ, որ Մադրիէնը շատ պատուական ջահիլ աղջիկ է, կրթուած ինչպէս միւսները առհասարակ։ Ի՞նչ կուզէիք, որ նա անէր, կարող է լալ, այն էլ շատ կամաց, բողոքել միայն խօսքով, որովհետև տակաւին անչափահաս է։

Հօրն. Բայց նա սիրում է... անդորը սէրը, այն, ես հասկանում եմ երբ Ճանփան հայելու պէս հարթ է. այն ինչ ես յուսադրուել էի աւելի խոչընդոտի վրայ, այս ատուածայնն ոյժին, որ ցանկութիւնն, կրքեր է ծնեցնում... Ձեր գաւակի նման տղայի հետ դժուր է. այն ինչ նայելով օրիորդի աչքերին, կարծես, վարդագոյն կայ. նրանց մէջ... ինչպէս ադնիւ ցեղի ձիերին Ճիպոտի մի հարուածն էլ բաւ է, որ նրանք թռչկոտան։

Մարքիզ. Այո, բայց ոչինչ չէ երևում. միևնոյն անդամ ես չըկարողացայ նրան տեսնել։

Հօրն. Ուրեմն ի՞նչ էք անելու. յայտնեցէք Դիզիէին, որ...

Մարքիզ. Յայտնե՞մ. ահ, ոչ երբէք... անկարող եմ... խե՜ղճ գաւակս. կարելի՞ բան է, որ նա իր մօրից այդպիսի հարուած կրէ։ Նրանց ասի. „ինքներդ կատարեցէք

ձեր յանձնարարութիւնը“։

Հօրն. Կանչին նրանք այդ։

Մարքիզ. Այո, քոյրը. բայց ոչ նա։

Հօրն. (ինքն իրեն). Աւելի լաւ. (բարձր ձայնով). բայց ի՞նչ։

Մարքիզ. Իսկոյն և եթ... Օրիորդ Կասթիլլանին հետս եմ բերել կառքով։

Հօրն. Բայց ի՞նչ տեղ է նա։

Մարքիզ. Կաթնատանը թողի, ուզում է սերով տարաքի. հանգիստ է բոլորովին... Ահա գալիս է... Չի կարող երևակայել թէ ինչ սարսափելի գործ է անելու։

ՏԵՍԻԼ Զ.

Նրանք, Էսթէր բարձրանում է սանդուղքներով.

Էսթէր. (զւարթ, բերանը սրբելով). Ասէք, խնդրեմ, սիրելի տիկին, ինչեղն է, որ չաղ մարդիկ շատ են սիրում կաթնեղէնը։ Ես չափազանց սիրում եմ կաթնեղէնը։ (Նկատելով Հօրնիւսին). Ա՜, ա. պարոն վարժապետ...

Հօրն. (ողջունելով). Օրիորդ... (բարձրանում է)։

Էսթէր. (Նայելով շուրջը). Դիդիէն որտեղ է։

Մարքիզ. Այնտեղ է, շուտով կը գայ։

Էսթէր. (Նստելով Թիկնաթոռի վրայ). Ո՜հ, ինչ լաւ է այստեղ։ Շատ գեղեցիկ է այս փոքր դահլիճը։ Մադըլէնի հետ այստեղ եղել եմ արդէն... շատ պիտի ցաւի ամեն մի մասբերելովը։ Բայց ինչ կարելի է անել, պէտք է համբերել։

Մարքիզ. (Հօրնիւսին). Դուրս էք գնում, սիրելի Հօրնիւս։

Հօրն. Միամիտ եղէք, հեռու չեմ գնայ։ (դուրս է գնում յետի կողմից)։

Մարքիզ. (գոչելով). Խնդրեմ, ի սէր Աստուծոյ։

ՏԵՍԻԼ Է.

Մարքիզուհի, Էսթէր, յետոյ Դիդիէն.

Էսթէր. Շատ պատուական մարդ է այս պարոնը, հրչափ համեստ, ծանրաբարոյ... Այ բոլորը բերել եմ... այ տիկին... Նամակները (զգուշաբար դարսում է բոլորը մօտիկ սեղանի վրայ)։ Ի՞նչ ասեմ, սիրելի տիկին, օգուտ չունի... ինչեղ դուք վախում էք, այն մասին ոչ մի խօսք։

Մարքիզ. (աչքը գցած ձախ դռանը, վախելով). Այո... Այո...

Դիդ. (ձախ դռնից հերս մտնելով ուղղակում է զարմացած). Ա՜հ, զարմուհի Էսթէր, այստե՞ղ էք։ Բոլորովին առողջ էք ուրեմն։

Էսթէր. Այո, ինչպէս տեսնում էք։

Դիդ. (մօրը). Ի՞նչի չասիր ինձ. (Էսթէրին). Մադըլէնն էլ եկաւ։

Էսթէր. (փոքր ինչ շփոթուած). Չէ, չեկաւ... գնացէք հո, խեղճ աղջիկը...

Դիդ. Ո՜հ, Տէր Աստուած. ինչ է պատահել նրան։

Էսթէր. Ոչինչ, ինչ պէտք է պատահէր... միայն այն մասին պէտք է խօսէինք...

Դիդ. Ի՞նչի մասին։

Էսթէր. (ուրախ). Մի շատ կարևոր բան ունիմ ձեզ հաղորդելու, սիրելի Դիդիէ։

Դիդ. Ի՞նչ էք ուզում ասել։

Էսթէր. Տէ՛ր Աստուած, դժար է բացատրել, մանաւանդ, որ ձեզ չեն յայտնել առաջուց, ինչպէս տեսնում եմ... (ուզում է նայել Մարքիզուհուն, որ երեսը դարձնում է) թէև, ճշմարիտն ասած, շատ բնական է, որ...

Դիդ. Երկար արէք, զարմուհի, դէ՛հ ասէք տեսնեմ...

Էսթէր. Ձեզ էլ յայտնի է, թէ ինչպէս քմահաճներ են ջահել աղջկները։

Դիդ. Քմահաճնե՞ր են, յետոյ...

Էսթէր. Դեռ էլի, սիրուն նման շարունակ շարժման մէջ են. ջահել աղջիկներին դժար է հասկանալ... Շատ ժամանակ չէ, ինչ որ մեր աղջիկը, կարծես, անհանգիստ, վրդոված լինի։ Ես ասի նրան. «Ինչի ես հալ ու մաշ լինում... եթէ չես բաղատաւորելու նրան... Դիդիէն խելօք աղայ է... խսկոյն կը հասկանայ բանի էութիւնը»։

Դիդ. (վրդոված). Բայց ընդհակառակն, ես ոչինչ չեմ հասկանում, բոլորովին չեմ հասկանում։

Էսթէր. Հանգստացէք, բարեկամ, ինչ կայ այդպէս նեղանալու, որ ծառի տերևի նման դողում էք...

Մարքիզ. (ծանր ոտ քաշելով, Էսթէրին). Աղաչում եմ, վերջ տուէք այդ խօսակցութեանը։

Դիդ. (բորբոքելով). Վերջացնել... բայց ինչ, մի ասէք տեսնեմ...

Մարքիզ. Դիդի, զաւակս, քո սիրած և ընտրած ջահել աղջիկը քեզնից ձեռք է վերցնում։

Դիդ. (գոչելով). Ինչպէ՞س. ո՞վ ասեց. անկարելի է։ Ինձանից ձեռք է վերցնում... բայց ես ձեռք չեմ վերցնում և չեմ դարձնի նրա տուած խոստմունքը։

Էսթէր. Սակայն դուք պատուաւոր մարդ էք. պարոն

Կոմկասեան տիպ.

Մարքիզ և այլապէս չըպէտք է վարուէք այսպիսի հանդամանքներում։

Դիդ. (որոտաձայն). Ողորմած Աստուած, այս ինչ է գալիս գլխս։

Իսաէլ. Ինչ որ շատ շատերին է եկել և ոչ ոք էլ ձեզ նման գլուխը մահու չէ տուել։

Դիդ. (կկոտաձայն). Օ՜ֆֆ, սարսափելի բան է... երազումն եմ, տեսիլք է այս։ (մօրը կողտաբաբը). Դու գիտի՞ր այս. հա...

Մարքիզ. Այո...

Դիդ. Ես բան չասիր ինձ... Ո՜հ վատ է արածդ։

Մարքիզ. Չէի կարծում... հաստատ յոյս ունէի, որ...

Դիդ. Ուրեմն Նիցցայից մեկնելը, այն հնարովի հիւանդանալը... այս ամենը պայմանաւորած բաներ են. հա։

Մարքիզ. Դիդիէ, պաւակս...

Դիդ. Ոչ, հաւատամ, քեզ չեմ հասկանում... պէտք է նախազգուշացնէիր ինձ. այն ժամանակ ես կը հասկացնէի, կը պաշտպանուէի։ (Իսաէլին). Վերջապէս, ասէք խնդրեմ, օրիորդ, ինչ բանումն է մեղադրում ինձ. այդ ինչ ցած ամբաստանութիւն է, որին ես զոհ եմ եղել։

Իսաէլ. Ամենևին, ամբաստանութեան նշոյլ անգամ չըկայ սրանում. կարելի բան է, մեղադրել ձեզ նման ազնիւ ջահիլին; կատարեալ ջէնտլմէնին, սիրելի Դիդիէ... Մոնպէլիէի ազնուականութիւնը ձեր մասին այս է ասում միմիայն „Հիանալի տղայ է“. հաւատացէք, բարեկամ, դուք տերն է մեծ նշանակութիւն տալիս այդպիսի մի թիւրիմացութեան, որը շատ սովորական է... Մտածեցէք մի վրայ և կը տեսնէք, որ հարստահօսութիւնը մի տեսակ վարձնականութիւն է։ Նշանաւածները նայում են միմեանց յետևից, հսկում են իրար վոխադարձաբար և հասկանալի է, որ եթէ բնոյթը և ճաշակները չեն յարմարուում... Լաւ է աւաղ քան թէ յետոյ. հը՞, ինչ կասէք սրան։

Դիդ. Սարսափելի է, սարսափելի։

Իսաէլ. Ի վերջոյ, ինչ կայ կայ ձեր մէջ. ոչինչ— խօսքեր և քանի մի նամակներ... Դուք կը դարձնէք իրենները։ (վերցնում է քովը եղած առարկաները). Ահա ձեր ընծաները... Նրա մատանին... (կարծելով թէ նա չէ հասկանում). այ, այն մատանիքը, որը դուք ընծայել էք նրան...

Դիդ. (չարացած, համարեա երեսնալի ձայնով). Ո՜հ, մատանին յետ են տալիս ինձ։

Իսաէլ. (սպահելով ձեռին շարունակ տիեզերը դիմում է մարքիզուհուն). Պարկում ինչպէս է լինում, չըգիտեմ, միայն այստեղ այսպիսի իրերը պայմանով են գնում։ Մեր բոլոր գոհարավաճառները յետ են ընդունում, նրանք սովոր են սրան։ (Դիդիէին, յաղթանակելով). Այ, տեսնում էք։

Դիդ. (մօրը կկոտաձայն). Լսիր, հեռացրու սրան, թէ չէ կըսպանեմ։

Իսաէլ. (սարսափած). Ի՞նչ ասեց։

Դիդ. (որոտաձայն). Ասում եմ, որ այդ ցածութիւն, դարշ անամօթութիւն է և ձեր ասածները, ոչ մէկը չեմ հաւատում։

Իսաէլ. (խեղճուած ձայնով). Աչքս լուս. միթէ կարծում էք, որ մենք, ես և խորհրդական եղբայրս ընդունակ ենք...

Դիդ. Անկասկած. դուք, խե՜ղճ միամիտ...

Մարքիզ. Բաւական է։

Դիդ. Ձեզ են ուղարկել, որովհետև իրենք չեն համարձակուում գալ։

Մարքիզ. Որդի, խնդրում եմ։

Դիդ. Ա՜հ, թող մի է (ցուցնելով Իսաէլի վրայ). Տմարդութիւն է դիմացս կինմարդ դնել։ Նա լաւ գիտէր, որ թոյլ չէի տայ վերջացնելու, որ մի խօսք ասածին պէս իսկոյն նրա գլուխը կըջախջախէի։ (Դաշնամուրի վրայից վերցնում է վայրիկը և շշուեցնում է. Իսաէլին). Հեռացէք. դէհ հեռացէք, չըգիտեմ թէ ինչ կանեմ...

Մարքիզ. Դիդէի, որդի։

Իսաէլ. (շտապելով դէպի դուռը). Տէր Աստուած, գուն ողորմես։

Դիդ. (նետելով վայրը վազում է Իսաէլի ետևից). Ոչ, ոչ, սիրելիս, մի՛ գնայ, այդպէս մի՛ թողնի ինձ. (յետ բերելով)։ Դուք շատ բարի էք, ես ձեզ սիրում եմ, յարգում եմ, ներեցէք ինձ։ Ես բարկութեանս ժամանակն ասի... մնարդ չըգիտէ ոչ արածը և ոչ ասածը... խնդրեմ չընեղանաք ինձանից։ Այն աստիճանի սարսափելի է... այնչափ անսպասելի... Մի լաւ միտք արէք, թէ ինչպէս բախտաւորութեան մօտեցել էի, բոլորովին հաստատ հաւոզուած էի և յանկարծ, յանկարծ... (յուզմունքից չէ կարողանում ձայն հանել, մարքիզուհին շրջում է երեսը և լալիս)։

Իսաէլ. (նոյնպէս յուզուած, արտասուքը սրբելով.) Խե՜ղճ տղայ, արտասուքով յետ էք դարձնում ինձ. քիչ է մնում, որ ես էլ լամ։ Գիտէք հո, թէ ինչպէս եմ ցանկանում, որ մարդիկ բախտաւոր, միասին լինեն։ Հաւատացէք, չէի գայ եթէ կարծէի որ... ձեռքս խղճիս վրայ դնելով կասեմ, որ բոլորովին միտք չունէի ձեզ այդպէս վշտացնելու։

Դիդ. (ցասկելով). Վշտացնել։ Հեռացնում են յոյսս, ուրախութիւնս, սիրտս, հոգիս, կեանքս... ամենը ինչ որ ունեմ, ինչ որ իմս է, իմս. գողանում են ինձանից, խլում են և այս ամենը սրանց ասելով վշտացնել է նշանակում։ (ծիծաղում է յուզուած)։

Իսաէլ. Տէր Աստուած, ինչպէս վիրաւորուել է։

Դիդ. (բռնելով Իսաէլի թևը կողտաբաբը). Թշառական, մէկ շուրջներդ նայեցէք, է՜. այս տունը նրանն է, մերն է... այս կարասիքը նրա համար է, մենք միասին ենք ընտրել... բոլորը պատրաստ է, այս ամենը նրան է պատսում... իր դաշնամուրը... իր գրքերը և այժմ ինձ ասում էք թէ նա էլ չէ կամենում, չի գայ... բայց անկարելի բան է այդ։ Ո՜հ, աղաչում եմ, ասէք որ այդպէս չէ, չի կարող լինել... մա՛յրիկ... Մադը՞լէն։ (ընկնում է թիկնաթոռի վրայ, խեղդում է իր աղաղակները և հեկեկանքը բարձրացնում)։

Իսաէլ. (ցած ձայնով, սարսափած). Այ. արդէն խելագար է, կատարելապէս խելագարուեց։ (բեմի խորքում, սանդուղքի վրայ երևում է Հօրնիւսի շապքը)։

Մարքիզ. (կանչելով Իսաէլին կամաց դէպի դուռը). Գնացէք, գնացէք, թողէք նրան...

Իսաէլ. Ո՜հ, Տէ՛ր Աստուած... երբ մտածում եմ, որ խե՜ղճ մեր Մադըլէնը. (գնում է ձեռները դէպի երկինք ամբարձած Հօրնիւսի հետ խօսակցելով)։

ՄԱՆՈՒԿԻ ՀԻՒԱՆԴ ՀՈԳԻՆ

I

Մանկական հարցի դրութիւնը կարող է ազգերի քաղաքացիական զարգացման աստիճանի ճիշտ որոշիչ չափը լինել։

Քաղաքակիրթ ազգերի, քաղաքակիրթ հասարակութեան մէջ մանկական հարցի դրութիւնը աւելի է կանոնաւոր և նպատակայարմար։ Քաղաքակիրթ հասարակութիւնը վայրիներին չէ նմանում՝ ոչ թէ այն պատճառաւ, որ նա վաղայ մասին է մտածում, այլ գլխաւորապէս նրա համար, որ այդպիսի հասարակութիւնը հոգացողութիւն ունի ամբողջ ժողովրդեան ապագայի մասին, նրա պատմական նշանակութեան մասին, նրա իդէալների մասին, որոնք ապագայ սերունդին բարերարութիւնն են խոստանում։ Կարծում ենք որ մանկական հարցը քաղաքակիրթ հասարակութեան համար առաջնակարգ պետական նշանակութիւն ունի։ Եթէ մի քաղաքակիրթ ազգի կամ հասարակութեան մանուկների թիւը հետզհետէ տարիների ընթացքում պակասում է, այդպիսի ազգը, այդպիսի հասարակութիւնը հետզհետէ մեռնելու է, կորչելու է, պատմութեան էջերից անհետանալու է։ Իսկ ընդհակառակն մանուկներով առատ ու հարուստ ազգը կարող է հանդիստ և ուրախ նայել իր ապագայի վրայ, եթէ նրանց կանոնաւոր դաստիարակութիւն, զարգացողութիւն տալու համար բարոյական և նիւթական միջոցներ ունի։ Այդ տեսակէտից մանկական հարցը միևնոյն նշանակութիւնն ունի, չընայելով սաստիկ հակադրութեանը, թէ Ֆրանսիայի և թէ Ռուսաստանի համար։

Այժմ ամենքն էլ համաձայն են, որ Ֆրանսիայի բնակիչների աճումը հետզհետէ նուազում է։ Վերջին երկու հարիւր տարուայ ընթացքում Ֆրանսիայի բնակիչների թիւը Եւրոպական միւս պետութիւնների բնակիչների թւի համեմատ մօտ $^2/_3$ պակասել է։ Հարիւր տարուայ ընթացքում Ֆրանսիայի բնակիչների թիւը 26 միլիոնից հասաւ մինչև 37 միլիոնի, իսկ Ռուսաստանում միևնոյն ժամանակամիջոցում 25 միլիոնից հասաւ մինչև 94 միլիոն։ Ֆրանսիայի բնակիչների այդպիսի սաստիկ նուազումը բացատրւում է ոչ թէ ամուսնութեան թւի պակասութեամբ և կամ մահկանացութեան թւի տատանութեամբ, այլ ծնելութեան թւի չարունակաբար պակասութեամբ։ 1801 թուականից մինչև 1888 թուականը, իւրաքանչիւր տարուայ ծնելութեան թիւը 32 մինչև 22,2 հասաւ։ Իսկ ծնելութեան և մահկանացութեան թւերի յարաբերութիւնները աւելի պարզ ապացոյց են։ 1881 թուականի ծնուածները մեռնողներից 108,220 հոգով էին աւելի, իսկ 1889 թուականին 44,772 հոգով էին աւելի։ Ֆրանսիայի բնակիչների աճումը այժմ տարեկան 50000 հոգու հապիւ է հասնում, միևնոյն ժամանակ Գերմանիայինը 10 անգամ աւելի՝ մօտ 500000, իսկ Ռուսաստանինը 30 անգամ աւելի՝ 1,500,00»։ Մի քանի տարուց յետոյ, գիտութեան ներկայացուցիչների կարծիքով Ֆրանսիայում մեռնողների թիւը, ծնուողներից կըգերազանցէ և Ֆրանսիայի բնակիչները կսկսին նուազել ոչ թէ համեմատաբար, այլ իսկապէս։ Հասկանալի է, որ Ֆրանսիան տարտփով է նայում այդ տխուր երևոյթի վրայ և պատրաստ է այդ դրութիւնից ազատելու համար ամենայն միջոց գործ դնել, թէպէտ և արհեստական միջոցները հապիւ թէ օգնեն։

Այդպիսի դրութեան մէջ միայն Ֆրանսիան չէ գտնուում։ Ռուսաստանը ևս չընայելով իր մանուկների առատութեանը, Ֆրանսիական դրութեամբ շրջաններ ևս ունի։ Մենք անապացոյց չենք խօսում. պաշտօնական հաստատութիւնը—Բժշկական Դեպարտամենտը հաստատում է մեր ասածը։ Բժշկական Դեպարտամենտի 1887 թուի հաշուից երևում է, որ 110 միլիոն բնակիչներով ամբողջ Կայսրութեան մէջ ծնուել են 4,884,446 հոգի, իսկ վախճանուել են 3,288,838 հոգի, այսինքն Պետութեան բնակիչների թիւը աւելացել է $1^1/_2$ միլիոն հոգով. կամ 1000ի վրայ հաշուելով, ծնելութիւն հաւասար է 46, մահկանացութիւնը 31-ը ուրեմն աճումը 15։ Դեպարտամենտի հաշուից երևում է, որ հաշուի մէջ մտած 617 քաղաքներից 88 քաղաքների մէջ մեռնողների թիւը աւելի է եղել քան թէ ծնուողների և միևնոյն ժամանակ 26 քաղաքներում միևնոյն երևոյթը պատահել էր և 1886 թուին։ Բացի քաղաքներից մեռնողների թիւը աւելի է եղել քան թէ ծնուողների 14 գաւառներում, որոնցից 9 գաւառներն 1885 թուին ևս մեռնողներ աւել են ունեցել քան թէ ծնուողներ։ Բժշկ. Դեպարտամենտի հաշուի մէջ առաջ է բերած նա և Կոնստանտինուս չտատի (Ամերիկայում), Ֆրանսիայի և Հոլանդիայի բնակիչների ծնելութեան և մահկանացութեան համեմատական թւերը։ Կոնստանտինուսի 165 բնակած տեղերից, 50 տեղերում նկատւել է մեռնողների առաւելութիւնը, Ֆրանսիայի 87 դեպարտամենտից 37-ում, իսկ Հոլանդիայի 1123 բնակած տեղերից 33 տեղում. ուրեմն, այդ հաշուից երևում է որ բնակիչների նուազումի կողմից առաջին տեղն է բռնում Ֆրանսիան, երկրորդը Ռուսաստանը, իսկ երրորդը Հոլանդիան։

Որքան էլ որ բնակիչների աճման թւի նուազումը ուշադրութեան է արժանի, և կամ որքան էլ որ մահկանացութեան վերաբերմամբ ծնելութեան դէպքերի առաւելութիւնը ուշադրութեան է արժանի, այնքան ևս կարևոր է ուսումնասիրութեան հիւանդութիւնների տեսակները, որոնք յառաւելապէս բնակիչներին գերեզման են տանում։ Բացի այդ, աւելի են կարևոր քննութեան և այն հանգամանքները, երբ բնակիչները հիւանդութիւններից յանկարծակի չեն զոհւում, ինչպէս օրինակ խօլերայի ժամանակ, այլ բաւական երկար ժամանակ տանջւում չարչարւում են, նեղութիւն և վիշտ պատճառելով իրանց շուրջը եղողներին և ապա գերեզմանի մէջ հանդարտանում։

Առողջապահութեան իդէալը նախ և առաջ մարդու առողջութիւնն է, առողջ մարմնի մէջ, առողջ հոգի է անհրաժեշտ։ Բայց առողջապահութիւնը ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ չէ հաստատել թէ այդ իդէալն է—փայտկտարողը կամ դարբինը իր ըմբիշ (ատլետական) մկանունքներով, բարակ ջղային թելերով, ուղեղի հոգեկան թոյլ գործունէութեամբ։ Նմանապէս իդէալ չէ և այն. ինտելիգենտը, որի մկանունքները թոյլ են ու փխրուն և ամենաթեթև շարժողութիւնից շուտով հոգնում են, որի տպաւորութեան ընդունակութիւնը աւելի սաստիկ է և ջղային սիստեմայի գործունէութիւնը սուր։

Երբ մարդս իրան զուարթ և առողջ է զգում, երբ նա ֆիզիկական ու հոգեկան էնէրգիայի մի որոշեալ պաշար է իր մէջ ամփոփում և միևնոյն ժամանակ նրա ջղային գործունէութիւնը աւելի է գործում քան թէ մկանունքայինը, մենք իրաւունք ունինք նրան իրրև կանոնաւոր առողջ մարդ ընդունել, չընայելով որ նրա հոգե-

կան գործունէութիւնը աւելի է զարգացած քան թէ ֆիզիքական գործունէութիւնը, բաւական է որ նա իրան առողջ է զգում կատարեալ։ Մենք ընթերցողի երևակայութիւնը չենք վախեցնում թէ մարդկութիւնը հետզհետէ մաշւում է, քանի որ այժմ հոգեկան հիւանդների թիւը աւելանում է, և մարդկութիւնը «ջղային թուլութեամբ» է վարակւած—ջղային դարն է ուրեմն տիրապետում։ Եթէ մինչև անդամ ենթադրենք թէ եւրոպացիների նախնիքը աւելի էին առողջ, մենք պիտի հասկանանք որ նրանք իրանց մկանունքները աւելի էին զարգացնում, իսկ ջղային դրութիւնը—հոգեկան դրութիւնը քիչ էին վարժեցնում։ Նրանք աւելի դաժան, աւելի կենդանական կեանք էին վարում, բայց միևնոյն ժամանակ աւելի քիչ էին մարդասէր, քան այժմեան մարդիկ։

Ինչ և իցէ այժմեան ուռող սերնդի ջղականութիւնը (нервозность) աչքի է ընկնում։ Մանուկների հոգեկան հիւանդութիւնները—հասարակական լուրջ հոգացողութեան առարկայ պէտք է լինեն. ինչպէս որ վերկայում են մասնագէտները այժմ այդպիսի հիւանդութիւններ մանուկների մէջ աւելի և աւելի են պատահում։ Առաջուայ հեղինակները այդ մասին յիշատակութիւն են արած, իսկ նոր հեղինակները, ինչպէս օրինակ—Moreau de Tours, ամբողջ քննութիւններ են արած, որից երևում է, որ մանուկների մէջ պատահում են միևնոյն տեսակ հոգեկան հիւանդութիւններ, ինչպէս և չափահասների մէջ։ Պատմութիւնից էլ է յայտնի որ մանուկների հոգեկան հիւանդութիւնները առաջ էլ էին տարածւած։ Միջին դարերում յայտնի էին մանուկների հոգեկան հիւանդութիւնների զարհուրելի համաճարակումներ։ Տասն և չորսերորդ դարու վերջերում Գերմանիայում սաստիկ էր տարածւած „Սուրբ Վիտոսի“ պար ասւած հիւանդութիւնը (chorea—կաքաւախտ)։ Իտալիայում այդ հիւանդութիւը յայտնի էր «Torentisme» անունով։ Հեկերը, որ լաւ էր ուսումնասիրած այդ հիւանդութեան համաճարակումները, հաստատում է որ Սուրբ Վիտոսի ախտը առաջին անդամ երևեցաւ 1394 թւականին։ Կանայք և մարդիկ խումբ-խումբ հաւաքւած, հանում էին իրանց շորերը, ծաղիկներով էին զարդարւում ձեռք ձեռքի տւած պարում էին ամբողջ ժամեր մինչև ուժասպառ, խելացնորւած, թուլացած ընկնում էին գետնի վրայ։ Յետոյ այդ խմբերին մանուկները ևս մասնակցում էին և միևնոյն ցնորական երևոյթներն էին կատարում։ Վինցէնտ դէ Բովէն ասում է, որ 1237 թւին Էրֆուրտում հարիւրից աւել մանուկներ յանկարծակի պարելու ուժգնութեամբ էին բռնւած և ցատկելով ու պարելով մինչև Արնչտատ քաղաքն էին հասած։

Աներևակայելի զարհուրանք են պատճառում խաչակիր մանուկների պատերազմների պատմութիւնը։ XI, XII և XIII դարերում միքանի մոլեռանդների հրաւէրքով արևմտեան ազգերը վճռեցին Սուրբ տեղերը նուաճելու։ Այսպիսի կրօնական և մինչ հիւանդութեան հասած եռանդով մանուկների ահագին բազմութիւն թողում էին իրանց ծնողներին և հայրենիքը և յանձն էին առնում Սուրբ տեղերը ազատելու։ 1212 թւին Cloyes անունով մի գիւղում 16 տարեկան Ստեպկա անունով մի հովիւ էր ապրում։ Հովիւը իր հօտն արածելիս յաճախ էր մտածում, որ Աստուծոյ զերեզմանը և Նրա հետևողները անարգանքների են ենթարկւում։ Յանկարծ նա կարծեց թէ ինքն կոչւած է կատարել այն ինչ որ չըկարողացան կատարել Ռիչարդ-Առիւծասիրտը և Փիլիպոս-Աւգուստը։ Ստեպկան ուղևորւեցաւ Սէն-Դենի, ուր ուխտաւորների ահագին բազմութիւն էին հաւաքւած և դառնալով ուխտաւորներին հրաւանք, բորբոքւած ճառերով բոլորին նրանց դրաւեց։ Նա հաստատում էր որ չափահաս մարդիկ չեն կարող և չեն արժանի Աստուծոյ Գերեզմանը նուաճելու, որ ամենասպառ բարոյներն և ամենահզօր թագաւորները նպատակին չըհասնելով, կորան անհետացան։ Աստուած այդ գործը յանձնում է մանուկներին կատարելու, նրանց թուլութիւնը Նա անխորտակելի ոյժի կըդարձնի և մանուկները յաղթութիւնը կըտանեն։ Ստեպկան իր ճառերով բորբոքեց բոլորի սիրտը և Բրէտէնի բոլոր մանուկները եռանդով վառւած գնացին Ստեպկայի հետից։

10—12 տարեկան աղջիկները և տղաները թողեցին իրանց խաղալիքները, իրանց դպրոցները և արեան պէս կարմիր դրօշակի շուրջը խմբւելով Խաչակրաց պատերազմը ձեռնարկեցին։ Ֆրանսիայի ամենայն կողմերից, դեռահաս մարդարէները հաւաքւեցան և Ստեպկային իրանց զօրապետ ընտրեցին։

Հնար չըկար այդպիսի մանկական ձեռնարկութիւնը դադարեցնելու։ Երբ կամենում էին նրանց ոյժով արգելել, նրանց հետ մկանունքների, կծկումն. ցնցումն էին առաջանում, ջղային ամենայն տեսակ ախտանշաններ էին երևում։ Նրանք վտանգաւոր վերքէր էին իրանց պատճառում։

Հետաքրքրական է որ միևնոյն դէպքերը միևնոյն ժամանակ Գերմանիայումն էլ էին կատարւում։ Նիկոլայ անունով 12 տարեկան մի տղայ բոլոր մանուկներին ևս խելքից հանեց։ Գարնան ժամանակ 1212 թւին 50000 մանուկներից բարկացած երկու խումբ ուղևորւեցան Սուրբ երկիրն նուաճելու, նրանք դրօշակը բացած սաղմոս երգելով մի քաղաքից միւս քաղաքն էին անցնում։ Նրանք ոչ մի կոպէկ փող չունէին, ոչ մի պաշար հետներն չունէին վերցրած։ Կերակրւում էին վայրի պտուղներով, սովածութիւնը, ցուրտը, վատ եղանակը և այլ անբախտութիւններ նրաց վրա հասաւ, հոգարներով էին նրանք մեռնում, Գերմանիայից ուղևորւած 20000 մանուկներից մինչև Գենուա 7000 միայն հասան։ Այստեղ նրանք վրեռեցին Պաղեստին երթալ ոչ թէ նաւերով, այլ ոտով, որովհետև նրանց խօստացել էին որ Աստուած Միջերկրական ծովը ցամաքի կըփոխի։ Միևնոյն հրաչքին էին սպասում Ֆրանսիայից ուղևորւած և Մարսել հասած մանուկները։ Մանուկներից մեծ մասը կորան, մի մասն էլ Սարացիններին գերի ծախւեցան։

Ամենայն տեսակ հոգեհիւանդական երևոյթներով առաւել մեր «ջղային դարում» միթէ այդպիսի անտեղի զառանցանքները երևակայելն անդամ կարելի է։ Եթէ այժմ խելագարւում են, գոնեա բացատրելի են պատճառները, բայց միջին դարերի մեայլ ժամանակներում չըկային կեղծ դաղափարներ մտքերը, պղտորելու, հասարակական հիմքը տատանեցնելու և այլն. բայց զարհուրանք ոսպառնող հոգեհիւանդական երևոյթներ և հիւանդութիւններ բաւական էին տարածւած, որ այժմ ևս կարող էին յուսահատութիւն պատճառել թէ հասարակութեանը և թէ ուերութեանը։ Այն ժամանակներում բնաւորութիւնները աւելի խիստ էին։ 1609 թւին Ներքին Պիրենէում Լաբուրդում «դէմոնոլատարեա» ասւած հիւանդութեան համաճարակումն երևեցաւ։ Այդ հիւանդութիւնը հաւա-

ծեց թէ չափահասներին և թէ մանուկներին. Delancre շատ պարզ նկարագրեց այդ խելացնորութիւնը։

Շատ հետաքրքիր են նաև կատաղի քաղաքապետի կարգադրութիւններն ևս։ Վարակման առաջն առնելու համար նա այլ միջոց չըկարողացաւ հնարել, այլ ուղղակի հրամայեց կախաղաններ պատրաստել և կախել մատմոլորներին։ Այժմ այդպիսի երևոյթներ դժւար թէ պատահեն։ Կենսական և ընկերավարական պայմանները այժմ բոլորովին փոխուել են։ Մարդկերանց ուղեղի քանակութիւնը համեմատաբար այժմ աւելի է քան առաջ միջին դարերում, շատ հաւանական է որ ինտելեկտիւալ մարդկանց ուղեղում հիւսուածքների յատկութիւնը ևս ստատկացաւ, շատ հաւանական է որ ուղեղային գործողութիւններն էլ զօրացան, մասաւոր հարիզօնը լայնացաւ, մրատաւոր աշխատանքի պահանջն առաջ եկաւ։ Այդ պատճառաւ հասարակութիւնը հոգեկան անկանոնութիւններն վրայ պէտք է մտիկ տայ իբրև իր ընկերավարական կազմութեան հետևանքի վրայ։ Հասարակութիւնը այդ ընկերավարական կազմութիւնը պէտք է բարեփոխէ, դրանք միմեանց հետ սերտ կապած են։ Բայց և այնպէս առանց ընկերավարական կազմութեան բարեփոխումից՝ այժմ էլ հասարակութեանը չեն կարող չըվերդոմել մանուկի հիւանդ հոգին, քանի որ իւրաքանչիւր ազգի ապագան պատկանում է մանուկ սերնդին։ Թող հասարակութիւնը թողնէ ընդունուած կեղծ սկզբունքը, որով միայն հոգեհիւանդ մարդիք կարող են միայն պարծենալ, հաստատելով թէ «ինձանից յետոյ թող ջրհեղեղ էլ լինի»։

Մանկական հոգին հոգեհիւանդական տեսակէտից շատ քիչ է զանազանւում չափահասների հիւանդ հոգուց։ Հոգեկան հիւանդութիւնների այժմեան ձևերը, որոնք հասարակութեանը զարհուրեցնում են, մանուկների մէջն էլ են պատահում և պէտք է հասարակութեան կարեկցութիւնը աւելի պահանջեն, քանի որ անբնական է տեսնել փոքրիկ մանուկին վարակուած այնպիսի ատնջանքներով, որոնք համապատասխան չեն թէ նրա հասակին և թէ կազմուածքին։

Moreau-ի առաջ բերուած հոգեկան հիւանդութիւնների անուանացուցակին նայելով, մարդս ակամայ վերին աստիճանի կարեկցութիւն է զգում։ Մանուկի հիւանդ հոգին լինում է թէ զուտ ջղային և թէ զուտ բարոյական ձևերով։ Ցնցումները, անբնական ծիծաղները, ջղային ցաւերը, ճչիւնները, զգացողութեան փոփոխութիւնները և անբնական շրջումները—ահա այս բոլորը չեն կարող անգամ բոլորովին սմփոփել մանուկի ջղային հիւանդ հոգու պատկերը։

Բայց այդպիսի ջղային հիւանդութիւնները կարծես թէ այնքան էլ երկիւղալի չեն, քանի որ քիչ թէ շատ դրանց բժշկութիւնը, մանաւանդ հիւանդին կանոնաւոր հոգատարութեամբ՝ յուսալի են։

(Կը շարունակի։)

ԵՐԱԶ

[Նորա ալբոմում]

Սարսափելի երազ տեսայ։ Դիշերը էր,
Բուք, ըորանով մրրկուած էր ողջ այէր.
Սեւ էր հագել երկնի անեզր կապուտակ,
Ցելում՝ էին սեւ ամպերը դէս ու դէն,

ԱՆԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԻՑ. ԿԻՍԱԿՈՐԾԱՆ ԴԱՇՏԱՐԱԿ.

Փայլատակում՝ եւ լեռներ հրեղէն
Նոցա միջից արձակում՝ էր վառ կայծակ։—
Օրհասս էր մօտ։ Նեպտուն խփեց եռժանին
Անդնդախոր սեւ ջրերի երեսին.
Ծովը ծփաց. յորձանք տուեց աջ ու ձախ,
Կոհակները դիզւում՝ էին, խորտակւում՝,
Շանթի լուսով տեսնում՝ էի յատակում՝
Սարսափաբեր հազարաւոր բաց երախ։—

Նաւ, նաւավար, ուղեւոր՝ անդարձ, անել
Անյաց ալիքն սկսել էր կլանել՝
Ամենայն ինչ շինելով իւր կուր ու լաւ,
Մինչ ալեաց հետ կուում՝ էի ես անյոյս,
Ժայռից դէպ՝ ինձ մի գեղանի, չքնաղ կոյս
Ձեռքը մեկնեց եւ անվտանգ հանեց ափ։—

Ես ծնկաչոք ընկայ նորա առաջեւ
„Ազատիչ իմ,—կոչեցի—„կեանքս ու արեւ,
Ինձ կորզեցիր մահից, հիմա ամ քեզ զոհ“։
Այտը շեկնած, շրթին ժպիտ մեղմ, խաղաղ
Նայեց աչքիս եւ ասաց կոյսն այն չքնաղ—
„Ցոյր ինձ սիրտդ եւ դրանով եմ՝ ես զոհ“։

Աչքս գետին, անիսօս էի իրս արձան.
„Դու լռում՝ ես,—ասաց այն կոյսն անմեղն,
Թէ՞ տուել ես արդէն սիրտդ ուրիշին“։
—„Երբեք, երբեք. բայց ինչպէս տամ՝ ես այն ձեզ,
„Երբ իմ՝ սրտին այլ ուս չեմ՝ իշխում՝ ես.
Տէրը դուք էք. իսկ նա վաղուց ձեր գերին„։

Գիտական թերթոն

ՍՈԼՈՐԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՅԱՐԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Բնական գիտութիւններ ժողովրդացնող յայտնի ֆլամարիօնը շաբաթս այս տարի Եւրոպայի և Ամերիկայի հասարակութիւններին իր օտարոտի, մինչ ծաղրութեան հասած մի տեսութեամբ։ Մարսի (Հրատի) բնակիչները, ֆլամարիօնի տեսլով հրեղէն նշաններ են տալիս և այդ նշանները ոչ այլ ինչ է, եթէ ոչ Մարս մոլորակի բնակիչների պարզ ցանկութիւնը հաղորդակցութիւն ունենալ տիեզերքի տարածութեան մէջ լողող միւս մոլորակների հետ։ Ֆլամարիօնը կարծում է, որ այդպիսի երևոյթներին անտարբեր չըպէտք է լինել։

Ֆլամարիօնի այդպիսի հրապուրիչ տաւաջարկութիւնը անտեսի հետաքրքրութիւն ոչտեղից տաղակութեան մէջ խրած հասարակութեանը և ֆլամարիօնի պաշտողներից մինը, Peu քաղաքից, Հուսման անունով մի պատաւ կին Պարիզու գիտութեան ճեմարանին, ինչպէս էլ որ մենք հաղորդել էինք Տարազի № 32 խառն լուրերի մէջ, 100000 ֆրանկ կտակեց իրրև մրցանակ այն բաղտաւորին, որ երկրագնդիս միւս մոլորակների մէջ հաղորդակցութիւն ունենալու համար մի հնար կը գտնէ։

Այդպիսի լուրերը հասարակութիւնը մոլորեցնելով, կարող էին աւելի անախորժ հետեանքներով վերջանալ, և ահա մենք տեսնում ենք երևան են գալիս լուրջ գիտնականներ, պաշտպանել գիտութիւնը երևակայութեան բարբարոսական արշաւանքից։ „Natur“ պարբերական հրատարակութեան վերջին գրքոյկի մէջ, տպագրւած է ֆրանսիայի յայտնի գիտնական ստոյգագէտ Ամէդէի Հիլմէն այդ տեսիլ գրած նկատողութիւնը, որ և չտպագրում ենք հաղորդել մեր ընթերցողներին։

Աստղագիտութիւնն այս վերջին տարիներում մի առանձին փառաւոր դիտեր տրած չէ, երևի դրանով կարելի է բացատրել ֆլամարիօնի հրապուրիչ մտքերի յաջողութիւնը։ Բայց չըպէտք է կարծել, որ աստղագէտները դատնիների վրայ նստած հանգստանում են և կամ անգործութիւնից յամառում. ընդհակառակն այժմ աստղագէտները աւելի են զբաղւած զանազան հետազօտութիւններով և աշխատութիւններով, ինչպէս օրինակ երկնային կամարի լուսանկարի վերաբերմամբ, որոնք ահագին գիտական նշանակութիւն ունին, բայց հասարակութեան համար դրանք այնքան էլ հրապուրիչ չեն, այնքան էլ ազդու չեն, բաւական ժամանակ է, որ երկնային կէս կամարը կլանող դիտաւոր աստղեր չենք տեսնում, չըկան հրաբուղխներ լուսնի վրայ, չըկան այնպիսի հետաքրքրական երևոյթներ, որոնց մասին պատմելիս կարելի լինէր հրապուրել հետաքրքիր հասարակութիւնը։

Մի մարդ որ փոքր ի չատ հասատ տեղեկութիւններ ունի աստղագիտութիւնից, ծանօթ է փոքր ի չատ մեր արեգակնային սիստեմի մոլորակների արտաքին մակերևոյթի տեսքի հետ, նրա համար պէտք է պարզ լինի, որ եթէ կարելի է յուսալ մոլորակային տարածութեան մէջ հաղորդակցութիւն ունենալ մեր հարևանների հետ, այդ յոյսը լուսնի ու Մարսի սահմանից դուրս չի կարող լինել։ Մեզանից մինչև լուսինը միմիայն 400,000 վերստ է, նրա սաւառուակը պարզ է գծագրած, որի վերայ հեռադիտով նայելով կարելի է աւելի մանր մանրամասնութիւնները դիտել, լուսնի վրայ ոչ ամպ կայ, ոչ մէգ, այնպէս որ լուսնին ինչ տեսակ ցոյցեր ուղենաք՝ կարող էք ուղարկել, այդ ցոյցերն այնտեղ կը տեսնեն, եթէ ի հարկ է այնտեղ կը գտնւի մէկը որ տեսնէ, նմանապէս լուսնից մեզ կարող են ցոյցեր անել, եթէ ի հարկ է կը գտնւի մէկը, որ այդ ցոյցերը ուղարկէ մեզ։ Պէտք է ենթադրել որ լուսնի բնակիչները իրանց ֆլամարիօնները չունին, որ մենք կարողանայինք լուսնի բնակիչների հետաքրքրութիւնը չարժել, առ այժմ նրանք դեռ միջոցներ հնարած չեն մեր երկրագնդիս բնակիչների հետ հաղորդակցութիւն ունենալու, եթէ այդպէս չըլինեն Բերլի, Մէդլէրի և Զմիդտի պէս սրատես դիտողները վաղուց կարող էին լուսնի բնակիչների ցոյցերը դիտել։ Ուրեմն պէտք է ենթադրել, որ լուսնի բնակիչները դեռ մեզ ցոյցեր անելու չեն, կը սպասենք և կը տեսնենք ինչ կըլինի ապագայում։ Լուսինը երկրագնդից փոքր է, ուրեմն աւելի է վայելուչ, որ ամենից առաջ փոքրը մեծին դիմէ ծանօթանալու առաջարկութեամբ և երկրորդ, դեռ հարց է լուսնի բնակիչների աստեղագիտութիւնն, որ աստիճանի է զարգացած և արդեօք լուսնի աստղագէտները ունին կատարելագործւած հեռատեսներ և կարող են մեր ցոյցերը նկատել։ Ուրիշ բան է Մարսը, նա տարիներով աւելի մեծ է քան թէ երկրագունդը։ Այնտեղ գիտութիւններն աւելի են առաջ գնացել, աւելի են զարգացած, գոնեա այդ բանը ֆլամարիօնի համար ակիսիմ է։ Մարսի բնակիչները վաղուց է, որ ցանկանում են երկրագնդիս բնակիչների հետ հաղորդակցութիւն ունենալ և մինչև անգամ զարմանում են, որ աստղագիտութիւնը երկրագնդիս մէջ չատ քիչ է զարգացած։

Երևի Մարսի բնակիչները ամենալաւ հեռադէտներ ունին և զարմանալի այժեղ և մեծ կերոններ (свѣточи) ունին։ Մարսը մեզանից (երբ երկու մոլորակներն էլ ամենամօտ դրութեամբ են լինում) 160 անգամ աւելի հեռու է քան թէ լուսինը—համարեա 55 միլիոն վերստ։ Մեր հեռադէտներով Մարսի վրայ լուսաւոր նշաններ տեսնելու համար—այսինքն սև բիծը լուսաւոր մակերևոյթի վրայ, և կամ լուսաւոր բիծը սև մակերևոյթի վրայ հարկաւոր է որ այդ նշանը 130 վերստ տրամագիծ ունենայ։ Կարելի է հարկէ աւելի այժեղ հեռադէտներ չինել քան թէ այժմ մենք ունենք, բայց և այնպէս Մարսի խեղճ բնակիչները մի քանի վերստ տրամագիծ ունեցող նշաններ ստիպւած կըլինէին մեզ տալ։ Բայց այդ դեռ այնքան էլ անբաղութիւն չէ, այսպէս թէ այնպէս Մարսի նշանները մենք կը տեսնենք։ Բայց ահա դժւարութիւնը. Մարսի բնակիչներն ինչպէս պէտք է մեր նշանները տեսնեն, հէնց ամենաչաւ միջոցին, այսինքն երբ Մարսը և երկրագունդը չատ մօտիկ միմեանց մօտ կանգնած են լինում. երկրագունդը Մարսից դիտելով կորչում է արեգակի ճառագայթների ազդեցութիւնից, և կամ կարծես թէ մի սև կէտի նման սողում է կենդրոնական լուսատու մարմնի կրակափայլ սկաւառակի վրայով։ Այժմ հարց է առաջանում, թէ որքան անբնական այժեղ հեռադէտ պէտք է ունենալ, որով կարելի լինի արեգակնային լուսոյ կուրացուցիչ ալիքներում, այդ սև կէտի վրայ մի բան նկատել։ Իսկ երբ Մարսը երկրագնդից աւելի է հեռանում, որքան աւելի և աւելի այժեղ հեռադէտներ կը հարկաւորւին և մենք յուսահատ ստիպւած կը լինենք թողնել մեր երազական գիտաւորութիւնը։

«Ես չէի ցանկանում», ասում է Հիլիէմէնս վճռեցնել 100,000 ֆրանկ մրցանակ որոնողներին, որ այդպէս անզգուշաբար է տիկին Հուսման առաջարկել։ Բայց իմ վերջնականապէս կարծիքն է, որ մէջ-մոլորակային հաղորդակցութեան հարցը դեռ շատ հեռի է իրականութիւնից և համարձակում եմ մտածել, որ լրջամիտ ատղգաբանները հազիւ թէ այդպիսի աներևակայելի հարցին միջամուխ լինեն։ Ես հաւատում եմ գիտութեան անսահման յառաջադիմութեանն, բայց միևնոյն ժամանակ համոզուած եմ, որ այդ յառաջադիմութիւնն իր սահմաններն ունի, գիտութիւնը ոչինչ չի շահի, թողնելով սանձարձակ երևակայութիւնը ցնորքներին հեռամուտ լինելու, որոյ հաշուումն է և մէջ-մոլորակային հաղորդակցութեան հարցը։

Ֆ.

ԲՐԻՔՏՕՆ

ՀՈՒՍԱՆՆԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔՈՒՐՔՃԵԱՆ

[ազգային տիպերից]

Ճանաչում էք Անուշ աւերակները լուսատպող Յովհաննէս Քիւրքճեանին։ Նրան չըճանաչող շատ քիչ պէտք է լինի։ Ազգածանօթ մարդ է։ Դիտէք որ դեռ տակաւին կենդանի է, սա հարցը անտեղի չէ, որովհետև երկար ժամանակ է կենդանութեան մի նշան տուած չըլինելուն համար, հաւանականաբար ոմանք կարող են կարծել թէ, մի դուցէ չարաչուք մի վախճան ունեցած լինի. ոչ, ապահով եղէք, դեռ կ'ապրի, Աստուած խոր ծերութեան հասցունէ, արդէն յաւիտենականութեան համար ստեղծագործուած մի մարմին է, այնպէս մանրմունր թեթև բաներով տա Աստուած փոխելու արարածներից չէ։ Անուշ աւերակների մէջ՝ վրանի տակ, մի քանի տարի ապրած, ամեն տեսակ եղանակների անբարեխառնութեանց դիմացած, մորթը կոշի դարձած, բուն իսկ Հայաստանի կամարիցն է, որ քանի չարչի, այնքան կըկարծրանայ։

Քիւրքճեանը ազգային ինքնոյս ինտելիդենցիային է պատկանում։ Իր անցեալը, իր կենսագրութիւնը մանրամասնաբար ինքը գիտէ, հետևաբար ես նրա կեանքի միմեանց յաջորդած անցքերին անծանօթ եմ և չեմ կարող ասել, պատմական կենսագրածի նման, թէ Քիւրքճեանը ճիշտ այս ինչ թուականին, այս ինչ բաղաքի, այս ինչ գիւղումն է ծնուել, նախակրթականը այս ինչ, ցածագոյն ուսումը այն ինչ, և բարձրագոյն ուսումն էլ չըգիտեմ որ տեղ է ուսարուել, այս ինչ թուին մի գիւտ է տրել, և այս ինչ թուականին էլ մի բան է կորուսել, սրանց և ոչ մէկին ծանօթ չեմ, միայն այսքանը գիտեմ որ Կարին է ծնուել, յետոյ Երևան է գնացել, այնուհետև Էջմիածին, Աղեքսանդրապոլ, Անի, Թիֆլիս, Պետերբուրգ, Վիէննա և այլն տեղերը մաս է եկել, կեանքի կռիւները է ունեցել, բաղդի անողորմ հարուածների ենթակայ լինող վշտակիր մարդկանց շատերին նման իր իւղովը խորովուել, լուսանկարչութիւն սովորել և ապագայ է չինել։

Ես 79, 80 և 81 թուականներին Թիֆլիսում իրան ծանօթացել եմ։ Այն ժամանակներում Անուշ լուսատիպ ապակիներից չարունակ պատկերները ոսկեջրում և արծաթաջրում էր stéréotype տեսարանների հաւաքածոյներ պատրաստելու համար։

Տակաւին աչքս դէմն է, մի ցած աթոռի վրայ նստած, ատադին սամավարը սեղանին վրայ, ամառուայ սոսկալի շոգում, քիմիական գարշահոտ ջրերով լիքը մեծ ու փոքր սև կոնքերը առջին դրած, մէկ կողմէն ճակատից քրտինքը կըհոսէ, միւս կողմից Անուշ պատկերները, Պահլաւունի, Բագրատունի, ամարանոց, խորհրդանոց, մայր-եկեղեցի, հայրմատուռ, միջնաբերդ, Ախուրեան, Աչտարակ, Շահ-Աբբասի մզկիթ, խառն ի խառն բոլոր այս պատկերները անընդհատ ջրին մէջ թաթախում, հանում, կրկին ջրի մէջ դցում, վերատին դուրս հանում, և նորից թրջում և լանում էր.

Քիւրքճեանի մի երկու տարի չափ Թիֆլիսում համարեա ամենայն օր տեսակցութիւնը վայելած եմ, յետոյ 83-ից մինչ 84 Վիէննայում։ Նօթ տարի առաջ Սինդափուր էր գնացել, այժմ Սուրապայա է և այն տեղ լուսանկարութեամբ է պարապում, ուրեմն 7 տարի է որ իրան չեմ տեսած, չըգիտեմ թէ դէմքը ինչ փոփոխութիւն է կրած։ Շատ հաւանական է որ շատերը Քիւրքճեանի միայն անունը լսած և երեսը չեն տեսած, ուստի կերպարանքը փորը ինչ նկարագրելու մի փորձ ուզում եմ անել։

Հասակը միջակ, գլուխը մեծ և մի քիչ հաւկիթաձև, մազերը խիտ, սև, գանգուր և յամառականգուն, այնպէս որ մազերը չըսանտրած ժամանակ (արդէն սանտրած ժամանակները շատ հազուադէպ են) գլուխը որմնածեփի խոզանակի է նմանում։ Երեսին գոյնը թուխ, յոնքերը սև և թանձր, աչքերը նոյն գոյն, և կրակայայս, բայց և այնպէս քաղցրահայեաց։ Քիթը կատարելապէս հաւասարքիթ, կարելի է ասել մի քիչ աւելի հաւասարքիթից, մտա, այն պարարտ քիթերից, որոնք մի չնչին պատճառաւ պատրաստ են ուռենալու։ Կերպարանքին համար այսքան։ Դանք բնաւորութիւններին։

Արթուն, աշխոյժ, աշխատասէր, հաստատամիտ, բայց մինչև որ մի բան հաստատէ, հարիւր անգամ կը փոխէ, մի անգամ որ հաստատեց, այլ ևս պրծած է։

Պերճախօս, լաւ պատմող, ունկընդրաց ականջները լարել գիտցող, երբեմն չափազանց, բայց այնքան բնական և հաւանական, որ պատմածների ճշմարտութեան վրայ տարակուսել չէ կարելի, մինչ այն ատենան որ, եթէ չափազանցութիւնը մի քիչ բացակայ լինի, կարծես պատմութիւնը անհամ է լինում։ Մաքուր հայախօս, զոր կշպարտի Հայոց պատմութեան զանազան հեղինակաց հատորների ընթերցման և նա մանաւանդ Հայր Ալիշանի հրատարակութեանց։

Երբէք սրտաբէկ և յուսահատ տանէծք է կարդում բախտին, ճակատագրին, պատահարին, դիպուածին և այն ամեն բաներին, զորս չէ կարելի ձեռքով բռնել և վրէժ լուծել, և կատարած հազար ու մէկ նախատինք է տեղացնում այդ, անչօշափելի բաների վրայ, յետոյ. եղբայր, ասում եմ, ինձ լսիր և իր զանգատ յարուցած խնդիրից բոլորովին օտար մի ծիծաղաշարժ բան է պատմում, աչքերիցը արտասուքը հսսելու չափ քրքիջներով բոլոր վշտերը խկոյն մոռանում և նրա՛յր, ինչ ուրախ մարդ ես, Աստուած վկայ մի մեռնիր, ասում է։

Շատ է սիրում մխիթարական խօսքեր, վիճաբանութիւն, բնութիւն, նա մանաւանդ լուսին, երկինք, կապոյտ կամ աստեղազարդ, Դալմայէրի objectiveներ, գորտերի կարկաչիւն, խորոված, մրգեղէն, և նիւթական ամենայն միջոցներ, լաւ ապրելու և զեղեցիկ ճաշակաւոր բաներ գտնելու համար։

Թէ ինչ աստիճան կատարելութեան հասցրած է լուսանկարչական գեղարուեստը, դա յայտնի է։ 83 թուին Վի-

էնենայի լուսանկարչական ընկերութեան ժողովում հանդէս գրած գործերը մեծ ընդունելութիւն գտած են, որով ընկերութեան պատուոյ անդամ ընտրուած և մրցանակ ստացած է:

Ինչպէս վերև յիշեցի, Բիւրքճեանը այժմ հեռու, շատ հեռու մի օտար երկրում, այն է Սուրապայայում լուսանկարութեամբ է պարապուում, սիրում է բարեկամներից նամակներ ստանալ, մեծ հաճոյքով կարդալ և չըպատասխանել: Մի քանի տարին մի անգամ այն տեղից Հնդկաստանցի հայեր գալիս են Վիէննա, պատմում են Բիւրքճեանի մենոգամական և լոկ առեւտրական կեանքը: Բայց նա չը-ժանգոտուիր այն տեղ, մի օր կը ձանձրանայ, և կրվերադառնայ իր սիրելիների մօտ:

ԿՌՕ

Խմբագրութիւնից

Յայտնում՝ ենք մեր շնորհակալութիւնը բժշկապետ պ. Գրիգոր Տէր-Գրիգորեանին, որ մեր բացակայութեամբ փոխարինեց մեզ խմբագրելով մեր թերթերը:

—

Բացուած է „Աղբիւրի“ եւ „Տարազի“ առաջիկայ տարեայ բաժանորդագրութիւնը: Մանրամասնութիւնները կը յայտարարենք առաջիկայ շաբաթ: Առ այժմ այսքանս միայն կասենք, որ առաջիկայ թուականին „Աղբիւրը“ մտնում՝ է իր Տասներորդ շրջանը եւ այս առիթով „Աղբիւրը“ պիտի հրատարակի անհամեմատ մոխ եւ բազմակողմանի: „Աղբիւրի“ բաժանորդները կը ստանան այս տարի հինգ պրեմիա, որոնցից երեքը հայկական կեանքից:

„Տարազը“ նոյնպէս կը հրատարակի աւելի շքեղ: Կարեւոր նախապատրաստութիւնները թէ արտաքին գեղեցկութեան վերաբերեալ եւ թէ յօդուածների մասին արդէն արուած են: Խմբագրութեան պօրտֆելումն են արդէն մի քանի ընտիր վէպեր: Պայմանագրուած ենք արդէն եւրոպացի մի քանի նշանաւոր նրբագրիչների, փորագրիչների հետ եւ արդէն ստացել ենք մեր պատուէրների մի մասը:

—

Զեռք ենք բերել մեր „Աբօր“ տպարանի համար կրկին չորս մեքենա, որոնցից երկուսը տրագատիպ, երրորդը կարիչ և չորրորդը թուեր տպագրող: Այդ մեքենաները և տպարանական այլ պարագաներ արդէն ստացուած են:

—

«Աղբիւրի» և „Տարազի“ ամբողջ տարեայ համար ընտիր թուղթ միանգամից Կոպէնհագէնի Ընկ. ազատ շոգենաւով օգոստոսին անձամբ ճանապարհել ենք Պետերբուրգից, որ արդէն ստացած է Բաթում ու օրերս այնտեղից կը ճանապարհուի Թիֆլիս:

—

Մեր „Աբօր“ տպարանը ընդարձակելով արդէն տեղափոխել ենք թէ տպարանը և թէ խմբագրութեան գրասենեակը աւելի մեծ և փառաւոր բնակարան դարձեալ Բարիատինսկու փողոցի վրայ, Սալեքսանդրեան այգու հանդէպ, Խմբագրութեան առաջին յարկը:

—

Գրաքննական ատեանն է արդէն ուղարկուած հարիւրից աւելի կլիշաներ մեր արդի և իրանց շրջանը արդէն բոլորած գործիչների ու տեսարանների պատկերներ և. այլն:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԵՐԻՑ

Ազգեալ սեպտեմբերի 19-ին Բարձրագոյն հաստատուած են Իջմիածնի սինոդի անդամներ՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանն, Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանն եւ Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեանն.

—

Սեպտեմբերի 19-ին Բարձրագոյն հրամանով արձակուած են սինոդի անդամներից Սուրիաս եպիսկոպոս Պարզեանից եւ Ներսէս եպիսկոպոս Յովհաննիսեանից:

ժամանակագրութիւն

—

Մեր նշանաւոր երգիչ պ. Կուռօ այսուհետև կաշխատակցի մեզ և Տարազի ամեն №-ում կը տպագրուին նրա գեղեցիկները: Պ. Կուռօն յայտնի է արդէն իր սուր և ծիծաղաշարժ գրչով, ուստի բոլորովին աւելորդ ենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել այդ հայ մտակ (իր ճիշդի՝ երգիծաբանութեան մէջ) տպանդի հետ, քանի որ նրա անունը վաղուց հանրածանօթ է հայ ընթերցողին:

—

Հռոմի բարձրագոյն գեղարուեստական ճեմարանում աւարտած և տիեզերահռչակ Մակարիի մանաւորապէս աշակերտած հայազգի երիտասարդ պ. Արշակ Ֆէաւանեան կաշխատակցի Տարազին թէ իր վրձինով և թէ գրչով: Աղբիւրի պրէմիաներից մէկը պարոնի աշխատութիւնն է: Մանրամասնութիւնները յետոյ:

—

Նոյեմբերի կիսից կրսկսեն լոյս տեսնել առաջիկայ 1892 թ. մեր օրացոյցները. գինը 5 կ. մինչև 30 կ. մի քանի գիրքով, յաւելուածներով, պատկերներով և այլն:

—

Տարազի առաջիկայ №№-ից կրսկսենք տպագրել հայազգի Իշխանացուհի Աննա Մամիկոնեան-Էնիկոլոպի (Պարսից Վիէննայի դեսպանի դուստր) աշխատութիւնները: Ցարդեալ օրիորդը, որ Վիէննայում յայտնի է բարձր շրջաններում թէ իր գրչով և թէ վրձինով՝ խոստացաւ մեզ աշխատակցել և արդէն ստացել ենք օրիորդի մի քանի նկարների կլիշեները: Մեզ սիրալիր խոստացաւ և իր աշխատակցութիւնը Իշխան Մկրտիչ-բէյ Դադիան, որ շատ տարիներից է վեր տպրում է Պարիզ և աշխատակցում «Debats, Revues des deux mondes,» „Temps“ և այլն Ֆրանսիական թերթերին, Պարիզում հրատարակուող էնցիկլոպեդիայի համբագիրներից մէկն է և շատ յօդուածներ ունի տպագրած հայերի մասին վերոյիշեալ թերթերում:

—

«Тиф. Лист.»-ը հաղորդում է, որ հայ լուսաւորչականները, որոնց մինչև այսօր կառավարական հաստատութիւնների մէջ երդում էին տալիս հայ լեզուով, միայն վերջին ժամանակներս մի քանի տարաձայնութիւններ տեղի ունեցան հայ հոգևորականութեան և դատաստանական տեսանի մէջ։ Ցիշեալ հոգևորականութիւնը հանդուցեալ Մակար I կաթուղիկոսի անօրէնութեամբ մերժում է երդուեցնել հայերին ռուսաց լեզուով։ Այդ հարցի մասին Էջմիածնի Սինոդը գրագրութիւն ունեցաւ բարձր իշխանութեան հետ։ Այժմ, ինչպէս լսւում է, ներքին գործոց և պատերազմական երկու նախարարների փոխադարձ համաձայնութեամբ պրօէկտ է կազմուել, որ հայերը պիտի երդուեն անշուշտ ռուսաց լեզուով։ Եթէ պատահի, որ նրանք ռուսերէն չգիտենան, այն ժամանակ կարող են երդուել թարգմանի միջոցաւ։ Երդմնեցնելու իրաւունքը արւում է ա) պատերազմական վարչութեանը՝ երբ հայ նոր զինուորները պիտի երդուեն տան նոր ծառայութեան մէջ մտնելու համար։ Իսկ այն վկաներին, որոնք կարող են պատահել թէ պատերազմական և թէ քաղաքական դատաստանական տեսանեներում, պիտի երդուեցնեն յիշեալ տեսանների նախագահները։

—

Պետերբուրգի երաժշտական աշխարհում նոյն լրագրի տեսլով մի նոր տաղ պիտի փայլէ մօտ ապագայում՝ հայ ջութակահար պ. Նալբանդեան։

—

Հայոց թատրոնական կոմիտեաը որոշել է վերջնականապէս խաղալ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներում հայ բեմի վրայ հետևեալ պիեսները. „Օրիորդ Բերոյանց“, «Արշակ II.», «Պուտենիի „Օրեայ չարիքը“», «Հրէուհի», „Վերաքննիչ“, „Բին“, „Խելքից պատուհաս“, „Կեանքի խնջոյքում“, «Հոգով ողբասներ», Բերսոնի՝ «Սընամկանալը», Իբսենի «Երազը» թարգ. պ. Թարխանեանի, որը պիտի խաղայ գլխաւոր դերերից մէկը „Սեվիլիայի Վարսավիրը“, „Մոլորի“, „Ժլատը“, Օնէի «Լեռնագործարանատէր» Մալերի Ռեյ-Բուրսոնեակ, վերջինս կը խաղան պ. Թուրեանի բենեֆիսի ժամանակ։

—

Ներկայումս քաղաքագլուխ իշ. Ն. Վ. երկայնաբազուկ-Արզումեանը քիչ տակար է։ Նրա փոխանակ նախագահում է քաղաքագլխի օգնական պ. Ա. Իզմայելեանը։

—

Ինչպէս լսւում է Թիֆլիսի նահանգապետին դումայի ձայնաւորներից մի քանիսը դանդատ են տուել անցեալ երկու շաբթայ քաղաքագլխի օգնականի ընտրութեան համար։

—

Լուսաւորութեան նախարարութեան մէջ հարց է դարձեցրած ներկայումս, ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, որ Կովկասում բացի միջնակարգ տեխնիկական ուսումնարան գիւղատնտեսութեան և լեռնային գիտութեան վերաբերեալ ճիւղերով։

—

Այսօր ամսոյս 27-ին վարժուհիների փոխադարձ ընկերութիւնը կը տայ երաժշտական ընկերութեան դահլիճում գրական-երաժշտական առաւօտ ի յիշատակ Գոնչարովի և Մ. Լերմոնտովի մեծանուն գրողների։

—

Տաճկաստանի հայ լրագրների մէջ կարդում ենք հետևեալը.

Ազգային Վարչութիւնն իւր վերջին նստի մէջ որոշած է մէկ եկեղեցական և մէկ աշխարհական պատուիրակ կարգել դաւառների համար, որոնք պաշտօն ունենան դաւառական վանքերի դպրոցների և այլ ազգային-եկեղեցական հաստատութիւնների վիճակը ըստ իսկ տեղուն վրայ քննելու և յարմար դատած տնօրինութիւններն Վարչութեան տաւջարկելու ի գործադրութիւն։ Այս որոշման գործադրութեան համար Ամեն. Պատրիարքը պէտք եղած արտօնութիւնը պիտի խնդրէ Թիւրք կառավարութիւնէն։

—Բաղէշէն գրուած մի թղթակցութիւն կը յայտնէ թէ ուսուցիչները ստիպուած են եղեր ձգել և վերադառնալ իրենց քաղաք՝ Վան, որով քաղաքին Կեդրոնական վարժարանը փակ կը մնայ և աշակերտներէն ոմանք կը թափառին, ոմանք ալ արհեստի դնացեր են։

—Վանէն սեպտ. 18/30-ին մեզ գրուած մի նամակ նոյնպէս ողբալի վիճակի մէջ կը ցուցնէ այնտեղի կրթական գործը։ Նախակրթարանների մեծ մասը 4--5 ամիսով փակ կը մնան։ միջնակարգ կրթութիւնը բոլորովին բարձի թողի ձգուած է։ «20 տարի առաջուան վիճակին կը վերադառնան վարժարանները» կը գրէ թղթակիցը։

—Խնուսէն կը գրեն որ այդ վիճակ ցարդ չկրցաւ մնայուն մի հովիւ ունենալ։ Եկող առաջնորդական Փոխանորդները միշտ չուտով ձգեր և դնացեր են, թէև միջին հաշուով իւրաքանչիւր գիւղէն իրենց վճարուած է 3 ոսկի, թող հայ, իւղ, պապակ, գրամ և ուրիշ արտակարգ տուրքեր։ Խնուս 20 է տուլի հայաբնակ գիւղեր կը պարունակէ։

—Կ. Պոլսի Հայրենիքը կը հաղորդէ Ամեն. Պատրիարքը նկատողութեան առնելով թէ կաթողիկոսական ընտրութեան ժամանակը կը մօտենայ և թէ Ռուսահայերը արդէն ձեռնարկեր են կաթողիկոսական պատրաստութիւնների (պատգամաւորների ընտրութեան), պաշտօնապէս դրեց կաթողիկոսական Տեղապահին և Սինոդին որ փութացունեն Տաճկահայերի զրկուելիք հրաւիրագիրները, որպէս զի ասոնք ալ ժամ առաջ ձեռնարկեն ընտրական գործողութիւնների։

ԴԵՂԱՐՈՒԵՍՏ

Թատրոն

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի հոկտեմբերի 24-ին հայ դերասանական մշտական խումբը պետական Թատրոնում ներկայացրեց «Մի կնոջ սանձահարումը» վերնագրով կոմեդիան։

Եթէ մեր Թատրոնական կոմիտեաը ցանկանում է հայ բեմի յարատևութիւնը յետագայ տարիների համար՝ նա պիտի անշուշտ այդպիսի անյարմար պիեսներից խուսափի։

Շեքսպիրը թէև տարօրինակ ու կոպիտ նիւթ է ընտրել, բայց այն ժամանակի՝ այն է 16-րդ դարու ոգուն յատուկ էր այդ։ Նա կամեցել է ցոյց տալ երկու հակառակ պատկերներ մարդկային բնաւորութեան մէջ։

Շեքսպիրը եթէ գրել է այդ պիեսը, (որ կարելի է ասել Նրա Թոյլ գրուածներից մէկն է) Նրա համար՝ որպէս զի պատկերացնէր Ներոններին, թէ—ինչեր են կատարել Ալենեան Թերակղզում, բռնակալ դարերում։

Բայց ներկայումս ցոյց տէր մի կնոջ, որ այդպիսի զազրալի, բիրտ և բռնի միջոցներով խորտակւի, ոչընչանայ, նեղմանայ անհատականապէս տղամարդու վայրենի, դազանական—կամակոր սպառնալիքների առաջ։ Մինչև անգամ մեր հասա-

բակական սորին չերաբերում այդ բանը չի նկատում։ Բայց պէտք է խոստովանել, որ լաւ հայելի էլ չէ մեզ վերաբերմամբ ընդօրինակելու համար, որովհետև առանց այն էլ մեր կանանց վիճակը սարսուռ և անարգ է։

Թէև վերջին ժամանակներումս մի-այն եւրոպական քաղաքակրթութեան շնորհիւ մեր ընտանեկան կեանքը մի քիչ մարդավայել կերպարանք է ստացել։ Վերջապէս 19-րդ դարը այդ բանը չէ ընդունում։

Շէքսպիրը ընդհանրապէս իր պիէսների մէջ մատնել է կեանքի ծայրահեղ երևոյթները։ Այդ նրա հանճարի և տաղանդի գործն է։ Մենք այս դէպքում անտեղի ենք համարում քննադատ լինել։ Նա շատ անգամ իր խղճալը կամ մեռածը յայտնում է կոմիկների բերանով ու երկրպագել բաւական։ Այդ միջոցաւ նա մերկացնում է հասարակութեան առաջ շատ ատելի և անբնական երևոյթները բռնակալների անսահման հաճոյքից կամ կասկածից յուզացած։ Բայց այդ պատմական ասպետական գաղանի, ծաղրալի և անարգ երևոյթները պատկերացնելու համար դէպքերն նաև ուժեղ համեմատութիւնը։ Ընդհանրապէս նրա պիէսների, մասնաւորապէս և այդ կոմիկական նեղքին հոգեբանական կապը և ամբողջութիւնը պահպանելու, հասարակութեանը փոքր ի շատէ դեղարուեստական կերպով ցոյց տալու համար հարկաւոր է լուրջ նախապատրաստութիւն ունենալ։

Ղ.

—

Առաջիկայ հինգշաբթի հայ դերասանական խումբը կը ներկայացնէ արքունական թատրոնում «Արշակ Բ.» ողբերգութիւնը։

—

Ամսոյս 23-ին Արքունական թատրոնում գլխաւորապէս տեղական ոյժերից կազմած օպերային խումբը ներկայացրեց Ջուգէպպէ Վերդիի Ռիգոլետտո օպերան դեկավարութեամբ պ. Իպպոլիտով-Իվանովի։ Ջիղպալի դերը կատարում էր օր. Ուչեուլովան, որ առաջին անգամն էր երգում օպերայում և իր թէև փոքր, բայց գեղեցիկ սոպրանո ձայնով խոստանում է ապագայում լաւ երգչուհի լինել։ Մենք առայժմ անպատեհ ենք համարում մեր ընթերցողներին մանրամասն հաշիւ տալ օպերային այս ներկայացումների համար։ Սակայն յուսով ենք, որ տեղական ոյժերն էլ կարող են լաւ առաջնորդների դեկավարութեամբ շարունակել օպերային ներկայացումները և օր-օրի վրայ ջանք անելով դոհացնել մեր երաժշտասէր հասարակութեանը։ Իսկ տ. Զարուդնայան և պ. Իպպոլիտով-Իվանով մեր տեղական ոյժի համար լաւ և անկեղծ առաջնորդ և դեկավար կարող են համարուել։ Թատրոնը բոլորովին լիքն էր և օր. Ուչեուլովային մի քանի անգամ խուռն ծափահարութեամբ բեմ կանչեցին։

Թղթակցութիւն

16-ին Հոկտեմբ. Դարաշիշագ

*Դարաշիշագ գաւառամասի հայ ազգաբնակութիւնը, ուսման—կրթութեան գործում, շատ յետ է մնացել իր հարեւան գաւառների հասարակութիւններից։ Այդ շրջանի բազմաթիւ գիւղերից եւ ոչ մէնում շրջան ոչ ծխական—եկեղեցական ուսումնարաններ, ոչ կանոնաւոր դպրոց *), ոչ ժողովրդական զրատուն—ընթերցարաններ եւ ոչ էլ մտաւոր զարգացման նպաստող ուրիշ հիմնարկութիւններ։*

Այդ պատճառով բազմաթիւ երեխաներ այդ շրջանում մնում են առանց մտաւոր մնունդ ստանալու եւ մեծանում են առանց կանոնաւոր ուսման։ Այդ մնատաղ սերնդից մի փոքր մասն միայն, որ պատահանում է գիւղական ուսեալ դասակարգին, ծմեռ ժամանակ սովորում է գիւղական տիրացուների եւ զրագիր—խաչիթոնների մօտ, որոնք միայն կարողանում են ուսուցանել փոքրիկներին անծոնի կերպով „այբուբենը“ գրել եւ կեղեցում երգել։ Մինչին եւ ստոր դասակարգի երեխաներն, որոնք մի պատկառելի թիւ են կազմում՝ այդ գաւառաբաժնում,—այդպիսիներն էլ վարժւում են փողոցային կեանքի կոբստաբեր հետեւանքներով, անբարոյականացնող այլ եւ այլ դատն հանգամանքներով եւ տմբողջ ժամանակ թափառելով գիւղերի փողոցներում, կրթւում՝ են վատախօսութիւնների եւ հայհոյանքների անվայել շիջայով...

Թէ ինչ ծաւալ ունի մտաւոր առաջադիմութիւնը Դարաշիշագի հայ ազգաբնակութեան մէջ—այդ պէտք է հասկանալ հետեւեալից։ Հրատարակւում են գրքեր այլ եւ այլ տեղերում,—իսկ Դարաշիշագի բաժնի բնակիչները քաղա՞ չեն ունենում տեսնել այդպիսի մեհեթարական բաներ եւ իրանց շրջանում. հանդէս են գալիս հայ ուսանողներ,—բայց այդ գաւառակի հայ հասարակութիւնը անդամներ չի ունենում թացատութիւնը շատ ամնշան է։ այդ ուսանող դասակարգում։ Եւ վերջապէս բացում են զանազան ուսումնարանական հիմնարկութիւններ զանազան գաւառներում,—եւ Դարաշիշագը չի ձեռնարկում այդպիսիներն ունենալու, այլ կղզիացած դիրք է բռնում՝ առանց լուսաւորութեան գործին հետամուտ լինելու...

Ժամանակ է վերջապէս ուշադրութիւն դարձնել Դարաշիշագի շրջանի ամենից մոռացած հայ հասարակութեան վրայ, կրթական գործի վերաբերմամբ։ Դպրոցական գործին նախաձեռնողների ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ հանգամանքի վրայ։

Դ. Ս.

—

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շատ ցաւում եմ, որ ես Տուրգենեվի վէպը թարգմանելու ժամանակ, այնքան զբաղուած էի թարգմանութեան զուտ դեղարուեստական կողմով, որ բոլորովին ակամայ, համարեա անդիտակցաբար՝ մտցրել եմ իմ թարգմանութեան մէջ մի քանի կոպիտ լեզուադիտական սխալներ, որոնց հիման վրայ մի խստագատ պարոն սատիկ բարկացած թունդ խօսքեր է ուղղում իմ հասցէին «Մուրճ» ամսագրի միջոցաւ։

Նախ՝ չնորհակալութիւն այդ պարոնին, որ իմ ուշադրութիւնը դարձրեց իմ արած գործի թերութեանց վրայ, և երկրորդ... երկրորդ՝ իմ գրախօսը սատիկ միակողմանի արտադրած է երևում։

Գեղարուեստական գրուածքների թարգմանութեան գլխաւոր արժանիքը՝ գեղարուեստական ամբողջութիւնն է, ոճի, պատկերների և գրուածքի «ոգու» ճիշտ արտայայտութիւնն է։

Թարգմանել մի գեղարուեստական գրուածք՝ նշանակում է վերստեղծել այդ գրուածքը ուրիշ լեզուով, իսկ այդ վերստեղծելու գործողութեան ժամանակ՝ թարգմանիչը պէտք է կարողանայ իր երևակայութեան մէջ ամփոփել գրուածքի ընդհանուր դոյնը, ընդհանուր գեղարուեստական չինուածքը և դրա համեմատ էլ՝ թարգմանել, վերստեղծել... Վայ նրան, ով որ թարգմանութեան ժամանակ՝ ոտի-ցիալիստ լեզուադէտի նման՝ բառերի ետևից կը ընկնի, առանց ուղղելու իր թարգմանութեան ընդհանուր ամբողջութիւնով, առանց ուշադրութիւն դարձնելու պատկերների համեմատական ճշտութեան և գեղեցկութեան վրայ, ոճի սահունութեան և դիւրընթացութեան վրայ։ Տուրգենեվի վէպը թարգմանելու ժամանակ՝ ես այդ վերոյիշեալ խնդիրներով էի զբաղած և միայն դրանով պիտի բացատրել այն բառերի սխալները, որ ես արել

**) Խօսքս հայերի մասին լինելով բացատրութիւն պիտի կազմէ Դարաշիշագի շրջանի մի ա և ա ա ա ա ա ա դպրոցը (Нормальное Училище), որը հիմնուած է Ելենովկա մեծական գիւղում։*

եմ, որոնց վրայ ես ուշադրութիւն անգամ չեմ դարձրել... Ես խօ չեմ ուզում պաշտպանել իմ սխալները, ես միայն ասում եմ, որ այդ մի քանի երկրորդական, չնչին սխալներով՝ չի կարելի որոշել թարգմանութեան արժանիքը, որ այդ սխալների մասին պէտք է խօսել այն ժամանակ, միայն երբ արդէն խօսել, վերջացրել էք՝ թարգմանութեան աւելի մեծ, ճշմարիտ արժանաւորութեանց, կամ թերութեանց մասին. Իսկ „Մուրճի“ պ. գրախօսը (Տ. Յ.) փորփրել, գտել է իմ թարգմանութեան մէջ մի քանի բառացի սխալ և միայն այդ սխալների հիման վրայ՝ ուզեցել է՝ թէ ինձ և թէ իմ թարգմանութիւնը միանգամից ոչնչացնել։ Խնդրեմ թէ՝ ոչ ոք չի կարող արգելք լինել պ. Տ. Յ-ի այդ ցանկութեանը, բայց նախ՝ բաւական չի մի բան ցանկանալ—պէտք է և կարողանալ, իսկ երկրորդ որ այդ տեսակ ցանկութիւնները բոլորովին անյարմար են գրականական տարբերգում, որտեղ միայն ճշմարտութիւն պէտք է խօսել և ճշմարտութիւն պաշտպանել։

ԵՐ. ՂԱԶԱՐԵԱՆՑ.

Ս. Պետերբուրգ.
1 Հոկտ. 1891 ամի

—

ՄԱՀԳՈՅԺ

Նոր կայ հոկտեմբերի սկզբներում Սան-Ստեֆանոյում զնդակոծեալ եղաւ եռ. մի քանի ժամից յետոյ վնասուածներից հոգեւոր եռ. հիգ տարեկան հաւատարիմ հայազգի իշխան Ադեմար Սուալէան։ Հանգուցեալը իշխան Դաղեւանների տեսակ է։ Մեր ստացած տեղեկութիւնները հերքում են Figaro-ում տպուած լուրը թէ վատասեռի Ադեմարին սպանել է յայտնի ռուսազգակրոն Արիանաւը։

Հանգուցեալի ընտանիքի անդամների հեղինակութիւնն է, որ Ադեմար Սալիանի սպանողը նրա կատաղեների դասակարգին է։ Հանգուցեալը յայտնի էր իր ազնիւ բնաւորութեամբ եռ. խելքով Նոյոպայի, մանաւանդ Կ. Պոլսի դիպլոմատ շրջանակներում։ Յոդոպիսակորութեան ներկայ էին Կ. Պոլսի բարձր շրջանին պատկանող հաւատարիմներ, պետութեան բարձր պաշտօնեաներ եռ. օտար տէրութիւնների ներկայացուցիչներ։

—

Խառն լուրեր

Զիմնը լուռանի վրայ. Ամերիկական լրագիրների ասելով պրոֆեսոր Դիլուէնը Նիկսի դիտարանից [Նալիֆորնա] յաջողեց հանել լուսնի մի քանի յաջող տեսարաններ եռ. այդպիսով լուսնի բարձր տարերից մէկի վրայ նա նկատեց սպիտակ փայլուն կէտ, որ նրա կարծիքով ծիւնի կոյտ է։ Եթէ նրա կարծիքը հաստատուի եռ. եթէ ճշմարիտ որ լուսնի վրայ ձիւն կայ, ինչպէս որ Մարսի բեւեռներում, այն ժամանակ շատ յայտնի գիտնականների կարծիքները կը ջրուին եռ. պիտի ընդունել, որ լուսինն եռ. ունի մեր երկրագունտի պէս՝ մթնոլորտ։

—

„Կասպի“ լրագրի մէջ կարդում ենք մի այսպիսի լուր։

Բազուցի Մերզա-Հիւսէյն օղլին դիմել է հաշտարար դատաւոր Բիսմիլլիցկին խնդրելով տալ իրեն պատճէնը այն վճռի, որով 1888 թուի նոյեմբ. 4-ին նա դատապարտուել է 5 օրւայ բանտարկութեան իր խանութի մէջ վատ ալիւր զտնուած լինելուն համար։ Այդ ալիւրի համար Մերզա Հիւսէյն օղլին կրել էր իր պատիժը, սակայն ալիւրը, որ վճռած էր ոչնչացնել, մինչեւ այժմ դեռ մնում է թուրքի մօտ եռ. դրա համար Մերզան տարեկան 230 ռ. բնակարանի վարձ է վճարում եղել։ Շատ անգամ նա դիմել է ոստիկանութեան, որ վերցնեն այդ ալիւրը եռ. ոչնչացնեն, բայց ոստիկանութիւնը մերժել է եռ. ուղարկել քաղաքային վարչութեան, վերջինս էլ առաջինին։

Մերզան յուսահատութեան մէջ է եռ. չը գիտէ ինչ անել։ Իր բոլոր յոյսը այդ „պատճէն“-ի վրայ է դրել, որին նա մտադիր է ներկայացնել բարձր կառավարչութեան խնդրելով որ փարքեն իր պատճառը։ Չէ՞ որ հոտած ալիւրի համար նա մինչեւ յաւիտեան չէր կարող բնակարանի վարձ վճարել։

ՈՍՏ ԵՒ ՈՍՏՔ

ՏԱՃԿԱՑ ՍՈՒԼԹԱՆԻ ԱՊՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

—

Սուլթան Աբդուլ Համիդ երկրորդ ծնուել է 1842 թուին, սեպտեմբերի 22-ին, հայրն էր սուլթան Աբդուլ-Մեջիդը, իսկ մայրն էր մի հայուհի։

Մայրը շրջապատուած եռ. բարեկացուցած քնուած լինելով, չը կարողացաւ իր որդու կրթութեան վրայ պարապել։

Աբդուլ Համիդը իր կրթութիւնը ստացաւ իր եղբայր Մուրադի հետ միասին իր հայր սուլթան Աբդուլ-Մեջիդի ձեռքի տակ եռ. միայն սովորում էր տաճկերէն։

Միայն աւելի հասակն առած ժամանակ նրան յաջողուց քիչ ծանօթանալ գիտութիւնների հետ եռ. մի քանի եւրոպական լեզուների հետ, աւելի փքանսերէն լեզի հետ։

Փոքր հասակից նա արդէն առանձին հակում էր ցոյց տալիս դէպի կրօնը եռ. յայտնի էր իր ջերմեռանդութեամբ եռ. ուրախութեամբ ժամանակ էր անց կացնում ուլեմների եռ. սոֆիաների հետ, որոնց հետ շատ անգամ վիճաբանութեան մէջ էր մրցնում ամենաուսումնական հարցերի մասին, մանաւանդ դուրանի մեկնութեան պատճառով։

Սուլթան Համիդը մանչուկից քիչ աւել հասակ ունի. բաւական թուխ դէմքով, սեւ, խիտ միրուքով եռ. սեւ ու թափանցիկ աչքերով։

Նրա արտաքին կերպարանքին նայելով նրան կարելի է աւելի տարիք տալ քան թէ նա է իսկապէս։

Նրա ամբողջ կերպարանքը մի տեսակ թուլութիւն է արտայայտում։

Փոքր հասակից նա արդէն ցոյց էր տալիս, որ շատ խնայող է, հակառակ Օսմանեան ցեղի միւս անդամների սովորութեան։

Բայց եռ. նա բուն սուլթանական առատաձեռնութիւն ունի, միայն դա իր տեղն ունի եռ. ժամանակը։

Դժուար է մի այլ իշխանաւորի պատահել, որ վարէր այդպիսի պարզ եռ. համեստ կեանք, քան թէ Աբդուլ Համիդ երկրորդը։

Նա փակուած կեանք է անցկացնում իր փոքրիկ Իլդիզ քեօսկ պալատում, որ շինուած է շատ ճաշակով եռ. ամենայն յարմարութիւններով։

Այդ պալատին կից կայ անտառ, լայնակի, լիճ, մի շատ զուարճալի շինութիւն հարեմի համար, որն ամբողջապէս կորած է ամենաձոիս բուսականութեան մէջ։

Պալատի մօտ կայ նմանապէս մի մեզ կիթ, որ շինել է Աբդուլ Համիդը, ուտի եռ. իր պատուի հանար կոչում է Համիդիէ։

Սուլթան Աբդուլ Համիդը զարթնում է վաղ առաւօտեան, զբաղել սովորածագին եռ. իսկայն ընդունում է պաղ վաննա.

Յետոյ նա ամբողջ ժամերով զբօսանք է անում իր պալատի պարկի մէջ. ապաստանում է պարապելու, նրա սեղանի վրայ դասաւած են լինում կարեւոր թղթերը եռ. եւրոպական թերթերից միայն կարեւոր կտրոնները։

Նա ամեն թղթերը ամբողջովին եռ. ուշադրութեամբ կարդում է եռ. յետոյ սառրագրում. դեռ օրինակ եղած չէ, որ նա մի թուղթ սառրագրէր առանց կարդալու։

Ամեն շատ քիչ կարեւորութիւն ունեցող գործեր կարգադրում է անմիջապէս ինքը։

Սիրալ է այն կարծիքը, որ իբր թէ բարդաքանութեան ուղղութիւնը կախուած է մեծ վեզիրից։

Տանը սուլթան Համիդը հագնում է եւրոպական հագուստ. միայն հանդիսաւոր օրերին հագնում է սեւ մահուդի սիւրտիւկ։

Նա երբէք գործ չէ ածում խմիչք. միայն ճաշի ժամանակ, եթէ կամ հիւրեր, եւրոպական կարգով մատակարարում են գինիներ։

Սուլթան Համիդը շատ ուշ է քնում եռ. երբէմն միայն 3—4 ժամ է քնում ու քնելիս շորերը չի հանում։

Նա շատ սիրով անձնատուր է եղած իր որդիների կրթութեան եռ. զմայլած է իր փոքրիկ դստեր ըսեւալի վրայ ածելու յառաջադիմութեամբ։

Ն. Տ. Ա.

Աւրինակ

Երեւան. Ստ. Կրտսլազրի Նոր տաներում եռ. մուտքով. մեր նամակի պատասխանը փութացրէք։

Գանձակ. Աղ. Կրտսլազրին այնպէս, որպէս որ Ձեր ցանկութիւնն է։

Բազու. Շեր. „Լոռշիր միշտ կեղծի նման բաներից, թէկուզ մատակարարութեան ոչ մի նշոյլ անգամ չը լինի նրանցում“...

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեանի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՕՐ

ԳՆԴԱ ԳԻՆՍՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ»

Պատկերազարդ հանդէսների

Տպագրում է ամեն լեզուներով **գրքեր**, *լրագրեր*, **ալմանակներ**, *ացբեցոտոսներ*, պատկերազարդ ամեն տեսակ հրատարակութիւններ՝ *իր վրայ առնելով* **ԿԼԻՇԵՆԵՐԻ** *փորագրելու տալը*, **ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՆԿԱՐԵԼԸ**, *ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ*. **ԹՈՒՂԹԸ**, ԿԱԶՄԵԼՆ ու ԲՐՕՇԻՒՐ ԱՆԵԼԸ։

Հասցէն՝
Тифлисъ,
Барят, ул. Художественная
Типографія „АРОРЪ“.

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ **„ԲԵՐԼԻՑ“** ՄԵԹՈԴՈՎ, *ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուների ամենակարճ ժամանակամիջոցում՝ աշակերտներին ազատ խօսել սովորեցնելու նպատակաւ* **դասեր են աւանդւում։**

Դանօվկայա փողոց, տուն Շահնազարեանի, № 15

Կովկասի հնութիւնների, *տեսակներների* լուսանկար **ՊԱՏԿԵՐՆԵՐ—ՄԵԾԱԴԻՐՔ** 50 **Կ. ՓՈՔՐԱԴԻՐՔ** 25 **Կ.** *ցանկացողներին խնդրում՝ ենք դիմել* „ԱՂԲԻՒՐԻ“ *խմբագրատունը։*

Վարդան Լիսիցեանի
„ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳԻՐԸ“
կանոնի համար, տեսք **№ 2.**
գինն է 50 կոպ.

Վաճառւում է բոլոր գրախանութներում։ Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի՝ Тифлисъ, Вартану Лисицянъ։ Փոխարով գնողներին դիջում—25 օրինակի համար 10%, 50 օրինակի համար 20% և հանապարհածախքը յօրինողի վրայ։ 3—3

ԲԱՑԻԱԾԷ

ԱՌԱՋԻԿԱՑ **1892** ԹՎԱԿԱՆԻ

բաժանորդագրութիւնը

ԱՂԲԻՒՐ

տասներորդ տարի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ

Տարեկան գինը պրեմիումներով 3 Ր.—28 ԿՈՊ.

եւ

„ՏԱՐԱԶ“

երրորդ տարի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՂԹԱԹԵՐԹ

Տարեկան գինը 6 ր.

Մանրամասնութիւնները հետեւեալ համարում.

Հասցէն՝
Тифлисъ, Редакція „Агбюръ“ и „Таразъ“
Խմբագիր-հրատարակիչ Տ. Նազարեան

Մամուլի տակ են *եւ յոյս կրտեսնեն ստորագրեալ հոյլերի. 15-ից*

1, **Ֆոցի** *օրացոյց* . . . . . գինը . . . 5 կոպ.
2, „ **պատկերազարդ** *օրացոյց* . „ . . . 15 „
3, **սեղմնի** *մեծադիր* „ . „ . . . 30 „

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՒՐՍ
ԿՐԿՆԱԿԻ
ԻՏԱԼԱԿԱՆ
ՀԱԶԻՊԱՀՈՒԹԵԱՆ
Ի. Ե. ԲՐԵՆՆԷՐ

Ամբողջ կուրսը երկու ամսեայ ընթացքում։

Վճարն է ամբողջ կուրսի 40 ր.

Հարցնել 8—11 ժ. առաւօտ. եւ 2—6 ժ. երեկոյեան, Նիժնադեռնիվսկայա փ. տուն № 25, վերին յարկ։ ամ. տ.

ԳԵՂԱՊԵՏ ԱԼԷՔՕՍ

Գծագրեաց Մարգարիտ Ալէքսանեան

Բաժանորդներին ուղարկւեց յուլիսի 1-ին։

գինն է 2 ր.

Վաճառւում է «Աղբիւր—Տարազի» գրասենեակում։

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ։ Доз. Ценз. Тифлисъ 26-го Октября 1891 г. Тип. „Ароръ“ Т. Я. Назарьянъ, Барят. ул.